Azg
հրատարակչություն daily

3 ԱՊՐԻԼ 1997, ՀԻՆԳՇԱԲԹԻ # 62 (1316)

Թուրքական զորավարժություններ Սեւ ծովում

ԱՆԿԱՐԱ, 2 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Սկսվել են Թուրքիայի ռազմածովային ուժերի «Ծովասդ-97» դյանային զորավարժությունները: Երկրի ռազմածովային ուժերի շտաբից ստացված հաղորդումների համաձայն, «Ծովասդ-97» մարտավարական զորավարժությունները կանցկացվեն Սեւ ծովի միջազգային ջրերում եւ օդային տարածությունում: Զորավարժություններին կմասնակցեն Թուրքիայի ռազմածովային ուժերի էսկադրոնային ականակիրներ, ֆրեգատներ, տորպեդային կատերներ, սուզանավեր եւ ռազմածովային ուժերի ռազմական ուղղաթիռներ, ինչպես նաեւ երկրի ռազմաօդային ուժերի կործանիչներ: Զորավարժություններին օտարերկրյա դիտորդներ են հրավիրված Ռուսաստանից, Ադրբեջանից, Ռումինիայից եւ Վրաստանից: Ըստ Թուրքիայի հեռուստատեսության հաղորդման, ապրիլի 4-ից 7-ն ընկած ժամանակամիջոցում Թուրքիայի մարտական նավերը կայցելեն Բուլղարիայի Վառնա, Ռումինիայի Կոնստանցա եւ Ուկրաինայի Օդեսա նավահանգիստներ, որտեղ նախատեսված են համատեղ զորավարժություններ այս երկրների ռազմածովային ուժերի հետ:

ԵՐԵՎԱՆ

Զորջ Ռադանովիչ. «Անում ենք ամեն ինչ, որպեսզի ճանաչվի Հայոց ցեղասպանությունը»

ԵՐԵՎԱՆ, 2 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏՊՍՆ: «ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում մենք ջանում ենք անել ամեն ինչ, որպեսզի ճանաչվի Հայոց ցեղասպանությունը, ինչպես նաեւ դադարեցվի Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակումը», ապրիլի 2-ին Երեւանի Ցեղասպանության թանգարանում կայացած մամլո ասուլիսում ասաց ԱՄՆ Կոնգրեսի անդամ Ջորջ Ռադանովիչը: Կոնգրեսականի խոսքերով, տարածաշրջանում խաղաղության հաստատման եւ տնտեսական բարգավաճման համար կարեւոր է, որ նախկինում հանցագործություններ կատարած երկրները ճանաչեն իրենց հանցանքը:

Պրն. Ռադանովիչը «Ռադանովիչ-Բոնյոր» օրենքի նախագծի հեղինակն է, որն անցած տարի ծայների մեծամասնությամբ ընդունվեց ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի կողմից: Ըստ այդ նախագծի, ԱՄՆ կողմից Թուրքիային տվող 25 մլն. դոլարը կրճատվում է 3 մլն. դոլարով (այս գումարը Թուրքիան օգտագործում է ԱՄՆ-ում 1915 թ. Հայոց ցեղասպանության մասին տարածեղեկատվությամբ հասարակական կարծիք ստեղծելու նպատակով), քանի դեռ Թուրքիան չի ճանաչել 1915 թ. Հայոց ցեղասպանությունը: Ի պատասխան այս նախագծի, Թուրքիան ներկայացրել է իր դաշնակցական բողոքը եւ մերժել մնացած 22 մլն. դոլարի օգնությունը: Այս գումարն էլ որն. Ռադանովիչն առաջարկում է տրամադրել Հայաստանի գյուղատնտեսության զարգացմանը:

Ասուլիսից հետո ԱՄՆ կոնգրեսականը ծաղկեպսակ դրեց Հայոց եղեռնի զոհերի հուշարձանին:

Ապրիլի 4-ին Ջ. Ռադանովիչը կայցելի Լեռնային Ղարաբաղ, ուր ելույթ կունենա հանրապետության Ազգային ժողովում: Նա կարեւորեց Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման եւ անկախության, Ղարաբաղում ազատ եւ անկախ ընտրությունների հարցը:

«Ազգի» կողմից ավելացնենք, որ երեկ երեկոյան ի պատիվ կոնգրեսականի ու նրան ուղեկցող պատվիրակության ընդունելություն էր կազմակերպվել Մ. Նահանգների դեսպանի բնակարանում: Մի շարք նախարարների, պատգամավորների, գերատեսչությունների ու կազմակերպությունների եւ մամուլի ներկայացուցիչների առաջ ողջույնի խոսք արտասանեց դեսպան Պիտեր Թոմսենը, որ ներկա գտնվող հայերի անունից շնորհակալություն հայտնեց որն Ռադանովիչին հայ ժողովրդի նկատմամբ տածած ջերմ բարեկամական զգացմունքների համար: Շնորհակալության խոսք արտասանեց նաեւ կոնգրեսականը:

Թուրքմեն պատմաբան Հիթ Լորին հրաժեշտ տվեց Աբաթուրի ամբիոնին

ՎԱՇԻՆՏՈՆ, 2 ԱՊՐԻԼ, ՓԱՍ: Արեւելյան Ամերիկայի Հայ դատի գրասենյակը տեղեկացել է, որ տեւականորեն Հայկական ցեղասպանության իրողությունը վերանայման ենթարկելու փորձեր կատարող որոֆեսոր Հիթ Լորին հրաժեշտ է տվել Փրինսթոնի համալսարանի Օսմանյան եւ Մերձավորարեւելյան ուսումնասիրությունների բաժնի Աբաթուրի ամբիոնի վարիչի պաշտոնին: Երեք տարի առաջ նրա նշանակումից հետո ամերիկացի հայտնի գիտնականներ ու Ցեղասպանության ուսումնասիրողներ շարունակաբար բողոքում էին Լորիի գործունեությունը որակելով որպես Թուրքիայի կառավարության համար ծավալված «գիտական վաճառականություն»: Ամերիկահայ գաղութն էլ, Հայ դատի կազմակերպմամբ, բողոքի ուժգին ալիք էր բարձրացրել՝ իրականացնելով մի շարք նամակարշավներ ու մշտապես կոչ անելով Փրինսթոնի համալսարանին դադարեցնել համագործակցությունը Լորիի հետ: 1996 թվականի հունվարին Հայ դատը հերթական նամակով զգուշացրեց Փրինսթոնի համալսարանին, որ Աբաթուրի ամբիոնն օգտագործվում է որպես Թուրքիայի կառավարության խորհրդանշական մեքենա եւ կոչ արեց պաշտոնանկ անել Լորիին: Վերջինս, բացի համալսարանում պաշտոնավարելուց, միաժամանակ վարձկանում տեղակայված Թուրքական հետազոտությունների ինստիտուտի գործադիր տնօրենն է, որ հիմնականում զբաղված է թուրքմեն լոբբիստական գործունեությամբ եւ ֆինանսավորվում է Թուրքիայի կառավարության կողմից:

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Ալցի նպատակը դարաբաղյան հիմնահարցի լուծումն է, ասում է Էրվե դը Շարեթը

Ֆրանսիայի արտգործնախարարը Երեւանում

Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Էրվե դը Շարեթը երեկ առավոտյան ժամանեց Երեւան, կարճատեւ աշխատանքային այցով: Այցելության առանձնահատկությունն այն է, որ նվիրված է Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծմանը, հայտարարեց նախարարը, դատասխանելով մեր հարցին: Դա կարեւոր է, որպեսզի եւ Հայաստանը, եւ տարածաշրջանը վերագտնեն խաղաղությունը եւ լիովին նվիրվեն տնտեսական զարգացմանը, նշեց նա: Սա նաեւ բարեկամության այց է, ասաց Ֆրանսիայի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը, փաստելով մեր երկրները միավորող «ջերմ, վաղեմի ու սերտ հարաբերությունները»:

Էրվե դը Շարեթը ժամանել էր Բաքվից: Դատասխանելով ադրբեջանական մայրաքաղաքում բանակցություններից ստացած տպավորությունների մասին հարցին նախարարն ասաց, որ դեռեւ է բարունակել աշխատանքը:

Երեւանի «Զվարթնոց» օդանավակայանում, ուր բարձրացվել էին Հայաստանի ու Ֆրանսիայի դեսպանական դրոշները, հյուրին դիմավորեցին ՀՀ արտգործնախարար Ալեքսանդր Արզումանյանը, ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպան Միշել Լեգրան, Ֆրանսիայում ՀՀ նախկին դեսպան (այժմ դեսպան Բելգիայում) Վիգեն Չիտչյանը, Երեւանում Ֆրանսիայի դեսպանության աշխատակիցները:

Օդանավակայանից Ֆրանսիայի նախարարը ուղեւորվեց Մայր աթոռ Ս. Էջմիածին, ուր նրան ընդունեց Գարեգին Ա Ամենայն հայոց կաթողիկոսը: Նրանք արդեն հանդիպել են Փարիզում հունվարին Վեհափառ հոր այցելության շրջանակներում, որի ընթացքում Գարեգին Ա-ն արժանացել էր Պատվո լեգեոնի շքանշանի կոմանդորի աստիճանի: Այսօր լավ առիթ է կրկին խոսելու մեր երկրների ու ժողովուրդների բարեկամության կամրջի մասին՝ ողջունելով նախարարին, ասաց կաթողիկոսը:

Տես էջ 2

ՀԱՄԵՌՈՏ

Շամիլ Բասաեւը՝ Չեչնիայի ավագ փոխվարչապետ

2 ԱՊՐԻԼ, BBC, RFI, VOA: Ռուսաստանում թիվ մեկ հանցագործ համարվող Շամիլ Բասաեւը նշանակվեց Չեչնիայի ավագ, առաջին փոխվարչապետ: Դա նշանակում է, որ երկրի նախագահ Ասլան Մասխադովի բացակայության դեպքում Շամիլ Բասաեւն է կատարելու հանրապետության վարչապետի պարտականությունները, իսկ նախագահի պարտականությունները կստանձնի փոխնախագահ Վախա Արսանովը, որին Բասաեւն անմիջականորեն ենթակա կլինի: Հիշեցնենք, որ ըստ սահմանադրության, նախագահ Մասխադովը նաեւ վարչապետի պաշտոն է գրավում: Մոլլաղի Ուղուզովն էլ դարձավ Բասաեւի առաջին փոխվարչապետը:

Հելմուտ Քոլի հարսը՝ թրոռի՞

Երեկ թուրական թերթերի տեղեկությամբ, իսկ հետո նաեւ ռուսական հեռուստատեսությամբ հայտարարվեց, թե Գերմանիայի կանցլեր Հելմուտ Քոլի որդին Պետերը հավանաբար մոտ ապագայում կամուսնանա մի թրոռիի հետ: Նրանք ծանոթացել են յոթ տարի առաջ ԱՄՆ-ում, երբ թրոռիին ուսանել է Մասաչուսետսի նահանգում: Ասում են, թե Պետերը սկսել է թուրքերեն սովորել որպեսզի իր ապագա հարսնացուի ծնողներին զարմացնի: Մինչդեռ կանցլեր Քոլի օգնականները հայտնել են, թե ամուսնության մասին խոսք չկա բայց չեն մերժել, որ Պետերը եւ թրոռիին ծանոթ են:

Լ. Դ.

ՍԱՆԿԱՐԱ

Թուրք նախարարը ներողություն խնդրեց Թուրքիայի եւ աշխարհի բոլոր հայերից

Թուրքիայի ներքին գործոց նախարար Մեհմեթ Ալեքսանը երեքշաբթի օրը հրապարակավ ներողություն է խնդրել վերջերս հայոց հասցեին արած անհարգալից արտահայտությունների համար, հաղորդում է «Ժամանակ» օրաթերթը Պոլսից: Ինչպես հայտնել էինք նախապես, նա «հայի անհարգ սերմ» արտահայտությամբ էր որակել Իրդական PKK կազմակերպության ղեկավար Աբդուլլահ Օջալանին, ինչը խորապես վիրավորել էր Թուրքիայում ապրող հայերին:

Թուրքիո հայոց դատարարք Գարեգին արք. Գազանճյանը այդ կապակցությամբ բողոքի նամակ էր հղել նախարարին, իսկ թուրական մամուլի որոշ ներկայացուցիչներ ցույց էին տվել բուռն հակազդեցություն եւ դատափետել Ալեքսանի «գեղարվեստական» արտահայտությունները:

Գրել էինք նաեւ, որ թուրքահայությունը ներկայացնող մի դատվիրակություն երեքշաբթի օրը գնալու էր Անկարա հանդիպելու նախարարին: «Ժամանակը» երեկ գիտեր տեղեկացրեց, որ նախարարուհին նույն օրն ընդունել է դատարարական աթոռի խորհրդական եւ ազգային Ս. Փրկիչ հիվանդանոցի հոգաբարձության ատենապետ Փիլոն Աբանի գլխավորությամբ ժամանած դատվիրակությանը եւ «մեծ ցավ» է իր արտահայտությունների համար: Նա ճանիցս ներողություն է խնդրել Թուրքիայի եւ աշխարհի բոլոր հայերից, ավելացնելով, որ այդ խոսքերն արդեն չէին սազում թե իր նախարարությանը եւ թե իր անձին: «Ցավոք սրտի, ասել է նա, մարդիկ երբեմն սխալվում են, եւ ես էլ մատնվեցի նույն վիճակին, սակայն դա խաղեցի ստեղծված կացությունից»:

Նա ավելացրել է նաեւ, թե ինքն այդ խոսքերով ուզել էր ակնարկել ԱՍԱԼԱ-ին, սակայն հետագայում թյուրըմբռնումներ էին առաջացել: Մերայ Ալեքսանի ասելով, ինքը դատարարվում է կատարել հասցեագրել նաեւ հայոց դատարարի հետ, որ նամակ էր հղել իրեն:

Նախարար Ալեքսանը ներողության խոսքերը կրկնել է նաեւ դոնփակ նիստի ավարտին հրավիրված մամուլի ասուլիսի ընթացքում:

Ռուսաստան-Բելառուս սահմանը՝ միայն քարտեզի վրա

2 ԱՊՐԻԼ, VOA, BBC, «ԱՇԱՏՈՒԹՅՈՒՆ»: Անցյալ շաբաթվանից, երբ հայտնի դարձավ, որ Ռուսաստանի եւ Բելառուսի նախագահները դատրաստվում են 2 երկրների միության մասին դայմանագիր ստորագրել, որի տեքստը չգիտես ինչու գաղտնի էր դահվում, սկսվեցին ենթադրությունները: Բորիս Ելցինը տատանվեց եւ առաջարկեց ստորագրել դայմանագրի կարճեցված տարբերակը: Ռուսաստանի Անվտանգության խորհրդի նախագահ Իվան Ռիբկինը երեքշաբթի օրը թռավ Մինսկ եւ նախագահ Լուկաշենկոյին ներկայացրեց դայմանագրի փոփոխված տեքստը: Ըստ երեւույթին Լուկաշենկոյին այն դուր չեկավ, նա Մոսկվա ժամանեց նախատեսվածից շուտ եւ առավոտյան փակ դռների ետեւում երես առ երես բանակցեց Բորիս Ելցինի հետ: Դրանից հետո, սկսվեց Ռուսաստան-Բելառուս բանակցությունների Բարձրագույն խորհրդի նիստը, որին մասնակցեցին բոլոր 9 անդամները, նախագահներն ու վարչապետները, այդ երկրների խորհրդարանների 2 դալատների նախագահները, ինչպես նաեւ ընկերակցության դատասխանատու քարտուղարը: Նիստում նախագահ Ելցինը հայտարարեց, թե դայմանագիրն ու կանոնադրությունը դատրաստ են ստորագրման, սակայն Ռուսաստանի եւ Բելառուսի միությունը նոր դետություն չի ստեղծում: Միեւնույն ժամանակ, ըստ Բորիս Ելցինի: «Այսօրվանից 2 երկրներ բաժանող սահմանը գոյություն կունենա միայն քարտեզի վրա»: Բորիս Ելցինի խոսքերով, ինքը, կյանքն է հարկադրում կողմերին շարժվել հետագա ինտեգրացման ուղիով, քանի որ ընկերակցությունը մինչ օրս չի արդարացրել 2 երկրների ու ժողովուրդների ակնկալիքները: Համաձայն Ռուսաստանի նախագահի, Ռուսաստան-Բելառուս միությունը կազմավորվելու է տնտեսական առանցքի շուրջ, սակայն մոտ ապագայում ընդհանուր տարադրամի հաստատում չի նախատեսվում: Բորիս Ելցինը կարծում է, որ ընկերակցության Բարձրագույն խորհրդի իրավասությունները չեն հակասում Բելառուսի եւ Ռուսաստանի սահմանադրություններին, հետեւաբար եւ չեն խախտի 2 երկրների ինքնիշխանությունը: Առավոտյան ժամը 11-ին ստորագրվեց «Բելառուսի ու Ռուսաստանի միության մասին» դայմանագիրը, որն այժմ ընդամենը 3 էջ է կազմում, այլ ոչ թե 17: Նախաստորագրվեց «Ռուսաստանի եւ Բելառուսի միության կանոնադրությունը», ինչպես նաեւ «Ռուսաստանի եւ Բելառուսի միջեւ փոխըմբռնման մասին» հուշագիրը՝ ներկա կանոնադրության վերամշակման եւ ընդունման վերաբերյալ: «Կանոնադրությունը կներկայացվի հանրությանը զանգվածային լրատվության միջոցներում մինչեւ մայիսի 15-ը քննարկելու համար, սակայն հանրաքվե չի նախատեսվում:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ԱԺ-ի ապրիլի 2-ի նիստում 2-րդ ընթերցմամբ շարունակվեց քննարկվել ՀՀ հարկերի մասին օրենքի նախագիծը, որը, սակայն, ԱԺ-ն չհաջողեց քվեարկության դնել: Օրենքի նախագծում սահմանվում են ՀՀ-ում հարկի հասկացությունը եւ հարկերի տեսակները, վճճերի լուծման կարգը, ՀՀ հարկային օրենսդրության եւ հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի խախտումների համար պատասխանատվությունը, ինչպես նաեւ այն սկզբունքները, որոնց վրա հիմնվում են հարկերի մասին ՀՀ օրենսդրությունը եւ հարկային հարաբերություններ կարգավորող այլ իրավական ակտերը: Օրենքի նախագծի համաձայն ՀՀ-ում սահմանվում են հարկերի հետեւյալ տեսակները՝ շահութահարկ, եկամտահարկ, ակցիզային հարկ, ավելացված արժեքի հարկ, գույքահարկ, հողի հարկ: Հարկային օրենսդրությամբ կարող են սահմանվել հարկային արտոնություններ հետեւյալ տեսակները՝ հարկվող օբյեկտի, հարկի դրույքաչափի, հարկի նվազեցում, հարկի հաշվարկման ժամկետի եւ հարկի վճարման ժամկետի հետաձգում եւ այլն:

Այնուհետեւ ԱԺ-ն սկսեց քննարկել Ավելացված արժեքի հարկի մասին ՀՀ օրենքի նախագիծը: Օրենքի նախագծի շուրջ ելույթ ունենալիս Հարություն Խաչատրյանը նշեց, որ հարկատուները բողոքում են հարկային քաղաքականությունից, որը «կոչս. ռեպրեսիվ քաղաքականություն է»: Պատգամավորը իր զարմանքը հայտնեց, որ ԱԺ-ն այդ հարցերի լուծման ուղղությամբ «օլիմպիական հանգստություն» է ցուցաբերում: Խաչատրյանը կասկած հայտնեց, որ այսօրինակ հարկային քաղաքականության հետեւանքով բյուջեն չի կատարվի: Արամ Մկրտչյանը նկատեց, որ տնտեսական քաղաքականության մասին հստակ ռազմավարություն կարելի է կազմել վերլուծելով հարկային քաղաքականությունը: Ըստ նրա, պետք է այնպիսի հարկային քաղաքականություն որդեգրել, որ որեւէ փոփոխություն տարվա ընթացքում չկատարվի: Վիկտոր Դալլաքյանն առաջարկեց ավելացրած արժեքի հարկից ազատել մամուլը: ՁԼՄ-ները, ինչպես նաեւ հոլագրական ոլորտը «մամուլի կտրվածքով»: Երջանիկ Աբգարյանը նշեց, որ կոչս հարկային քաղաքականությունից բողոքում են նրանք, ովքեր ուզում են դուրս գալ «սոցիալական որոշ խավերի»: Ըստ այդմ Աբգարյանը նկատեց, որ «մեր պետության տնտեսությունը միայն դաժան հարկային քաղաքականությամբ պետք է իրականացնել»: Աբգարյանը նկատեց, որ բյուջեն պետք է կատարվի, բայց ոչ ամեն գնով: «Պրոբլեմը միայն ֆիզիկական անձերի հետ է կապված», նշեց Երջանիկ Աբգարյանը: «Բարեփոխումների» անունից Խոսրով Հարությունյանը նշեց, որ 1-ին անգամ հարկատեսակը հենց սահմանի վրա գանձելու փորձ է արվում: Ըստ Հարությունյանի, նման հարկային քաղաքականությունը հնարավորություն է տալիս խթանել սեփական արտադրողին, խթանել արտահանումը: Նա ավելացրեց, որ հարկային արտոնություններ պետք է սահմանել բարդ դեպքերում:

Օրենքի նախագծում նշվում է, որ ավելացված արժեքի հարկն անուղղակի հարկ է, որը սույն օրենքի համաձայն հարկ վճարողներ հանդիսացող բոլոր անձանց կողմից վճարվում է պետական բյուջե ապրանքների ներմուծման, ՀՀ տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաեւ ծառայությունների մատուցման բոլոր փուլերում: Նախագծում նշվում է, որ ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) հաշվարկման կարգից ելնելով, իրացված ապրանքների եւ ծառայությունների արժեքի եւ սահմանված կարգով արտադրության շրջանառության ծախսերին վերագրվող նյութական ռեսուրսների, վառելիքի, աշխատանքների ու ծառայությունների, հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների արժեքի տարբերությունը կամ գնի մեջ մտնող հետեւյալ տարրերի միասնությունն է՝ աշխատավարձ, սոցիալական ապահովագրություն, հաստատումներ, ամորտիզացիոն հատկացումներ, վարկի տոկոս, արտադրության եւ շրջանառության ծախսերի առանձին այլ հոդվածներ, ինչպես նաեւ բյուջեի օգտին հաշվարկված առանձին հարկերը եւ պարտադիր վճարները, շահույթը:

ԱԱՀ-ի դրույքաչափը սահմանվում է 20 տոկոս ապրանքների ու ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ:

Վերոհիշյալ 2 օրինագծերը քվեարկության կդրվեն հաջորդ եռօրյա նիստում, եթե, իհարկե, ԱԺ արտահերթ նիստ չհրավիրվի:

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

■ *Տեր Հուսիկը հերքում է: «Ազգի» ապրիլի 2-ի համարում տպագրված նյութում «ՀՀՇ-ն նախարարական պորտֆելներ չի ակնկալում», տեղ է գտել թյուրիմացություն: Տեր Հուսիկի կառուցվող տան մասին նշել էինք, որ ունի 12 բնակարան: Երեկ ԱԺ-ում Տեր Հուսիկը խնդրեց հերքել այն, նշելով, որ 12 բնակարանից ընդամենը 3-ն են պատկանում իրեն եւ իր ընկերոջը:*

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Հարկային օրենսդրության որոգայթները

ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կաբինետում եւ կառավարության ծրագրում արմատական փոփոխություններ չեն նախատեսվում

Ա. Մ.

Նոր նշանակումներ գիտության եւ կրթության նախարարությունում

Ն. Մ.

Այցի նպատակը ղարաբաղյան հիմնահարցի լուծումն է, ասում է Էրվե դը Շարեթը

Ֆրանսիայի արտգործնախարարը Երեւանում

Սկիզբը էջ 1

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Գիտությունը Հայաստանում բարեփոխումների կարիք ունի

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ

Ռուսաստանը եւ Հայաստանը նշում են դիվանագիտական հարաբերությունների հինգերորդ տարին

Ռուսաստանի եւ Հայաստանի դիվանագիտական հարաբերությունների 5-րդ տարեդարձի առթիվ ՀՀ-ում ՌԴ արտակարգ եւ լիազոր դեսպան Անդրեյ Ուռնովը հանդես է եկել մի հոդվածով, որում անդրադառնում է երկու երկրների երկկողմ կապերի զարգացմանը: Հոդվածն այսօր ամբողջությամբ ղեսք է տպագրվեր «Ազգ»-ում, բայց բանի որ հայկական մամուլն արդեն հրատարակել է այդ հոդվածը, ներկայացնենք դրանում զետեղված առավել կարեւոր գնահատականները: Այդ հարաբերությունների գլխավոր արդյունքը դեսպան Անդրեյ Ուռնովը համարում է այն, որ այս տարիներին երկու ինքնիշխան պետությունների մերձեցման գործընթացը զարգացել է որակապես նոր հիմքի վրա, ձեւավորվել է գործընկերություն, որը կարելի է համարել միանգամայն ռազմավարական: Դեսպանը անդրադառնալով երկու երկրների ղեկավարների փոխայցելություններին ու հանդիպումներին, նշում է, թե «համաշխարհային ու տարածաշրջանային քաղաքականության մեծ մասի հարցերում Ռուսաստանի եւ Հայաստանի դիրքորոշումները մոտիկ են կամ համընկնում են»: Անցած տարիներին կնքվել է միջպետական, միջկառավարական ավելի քան 100 եւ միջգերատեսչական պայմանագիր ու համաձայնագիր:

1995 թ. ապրիլին ՌԴ Պետդուման ընդունեց հայ ժողովրդի ցեղասպանությունը դատապարտելու մասին հայտարարություն: Անդրեյ Ուռնովը նշում է, թե համագործակցության մի կարեւորագույն ուղղություն է պաշտպանությունը եւ անվտանգությունը: Այնուհետեւ դեսպանը գրում է. «Այդ փաստն ինքնին աղեղ վկայում է փոխադարձ մեծ վստահության մասին: Ռազմական համագործակցությունը համապատասխանում է երկու երկրների շահերին, տարածաշրջանում խաղաղություն ու կայունություն ամրապնդելու գործոն է եւ ուղղված չէ որեւէ երրորդ երկրի դեմ: Գաղտնիք չէ, որ վերջերս Ռուսաստանում հնչում էին այդ հնամազորդակցությունը կասկածի տակ առնող ձայներ: Ցանկանում եմ ընդգծել, որ դրանք չեն արտացոլում Ռուսաստանի եւ նրա ղեկավարության պաշտոնական դիրքորոշումը:

Այդ բանավեճին վերջ կդնի Հայաստանում ռուսաստանյան ռազմակայանի մասին պայմանագրի Պետդումայի վավերացումը»:

Դեսպանը փաստում է, որ ռազմական համագործակցությունն ամրապնդելու գործում ակնառու դեր է խաղում ռուսաստանյան սահմանապահ զորքերի «Արմենիա» խումբը, որն ապահովում է Թուրքիայի եւ Իրանի հետ ՀՀ սահմանների պահպանումը:

Արտաքին առեւտրի զարգացմանը խանգարում է տրանսպորտի շրջափակումը, բայց ըստ դեսպանի, միայն 1996 թ.-ին արտաքին առեւտրի շրջանառությունը կազմել է 220 մլն դոլար: Անցած հինգ տարիներին երկրի տնտեսությունը զարգացնելու համար Ռուսաստանը Հայաստանին տրամադրել է 100 մլն դոլարից ավելի վարկ: Հիմնականում այն ներդրվել է էներգետիկայի բնագավառում. Մեծամորի ատոմակայանի երկրորդ բլոկի վերագործարկման համար:

Այնուհետեւ դեսպանը անդրադառնում է օդային տրանսպորտի բնագավառում համագործակցությանը, նշելով, որ երկու երկրների տարբեր ավիաընկերություններ շաբաթական 22 չվերթ են կատարում Երեւան-Մոսկվա երթուղով: Աջակցում խաղաղություն ու կայունություն ամրապնդելու գործոն է եւ ուղղված չէ որեւէ երրորդ երկրի դեմ: Գաղտնիք չէ, որ վերջերս Ռուսաստանում հնչում էին այդ համագործակցությունը կասկածի տակ առնող ձայներ: Ցանկանում եմ ընդգծել, որ դրանք չեն արտացոլում Ռուսաստանի եւ նրա ղեկավարության պաշտոնական դիրքորոշումը:

Դեսպանը փաստում է, որ ռազմական համագործակցությունն ամրապնդելու գործում ակնառու դեր է խաղում ռուսաստանյան սահմանապահ զորքերի «Արմենիա» խումբը, որն ապահովում է Թուրքիայի եւ Իրանի հետ ՀՀ սահմանների պահպանումը:

Արտաքին առեւտրի զարգացմանը խանգարում է տրանսպորտի շրջափակումը, բայց ըստ դեսպանի, միայն 1996 թ.-ին արտաքին առեւտրի շրջանառությունը կազմել է 220 մլն դոլար: Անցած հինգ տարիներին երկրի տնտեսությունը զարգացնելու համար Ռուսաստանը Հայաստանին տրամադրել է 100 մլն դոլարից ավելի վարկ: Հիմնականում այն ներդրվել է էներգետիկայի բնագավառում. Մեծամորի ատոմակայանի երկրորդ բլոկի վերագործարկման համար:

Այնուհետեւ դեսպանը անդրադառնում է օդային տրանսպորտի բնագավառում համագործակցությանը, նշելով, որ երկու երկրների տարբեր ավիաընկերություններ շաբաթական 22 չվերթ են կատարում Երեւան-Մոսկվա երթուղով: Աջ-



ԱՐՄԵՆԻԿ

ՀԱՅ

Ռուսաստանի խորհրդարանականները՝ հայ-թուրքական սահմանում

ՌԴ Դաշնային ժողովի եւ Ռուսաստանի դաշնային սահմանապահ ծառայությունների ձեռք բերած պայմանավորվածությամբ եւ, իհարկե, հայկական կողմի համաձայնությամբ, ապրիլի 2-ին Հայաստանում գտնվող ռուսական սահմանապահների ծառայության պայմաններին ծանոթանալու նպատակով Արտաշատում էր Պետական դումայի պատգամավորների 11 հոգիանոց ներկայացուցչական պատվիրակությունը՝ ռուսաստանյան զանգվածային լրատվության միջոցների լրագրողների խմբի ուղեկցությամբ:

Ռուս խորհրդարանականների պատվիրակության կազմում էին կոմկուսակցության դումայական խմբակցությունից 5, «Ժողովրդահիշանություն» խմբակցությունից՝ 2, «Ռուսաստանի տարածաշրջաններ» խմբակցությունից՝ 2, ագրարային կուսակցությունից՝ 2 ներկայացուցիչ: Նրանք ներկայացնում էին Պետդումայի ազգային անվտանգության, պաշտպանության հարցերի, մշակույթի, տեղական ինքնակառավարման եւ սեփականության հարցերի մշտական կոմիտեները:

Պատվիրակությանն ուղեկցում էր Կովկասյան հատուկ սահմանապահ օկրուգի «Հայաստան» զորախմբի հրամանատար, գեներալ-մայոր Եվգենի Պոտեխինը: Հյուրընկալող երկրի սահմանապահներին անձամբ ներկայացնում էր Հայաստանի սահմանապահ զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ-մայոր Լեւոն Ստեփանյանը:

Հյուրերին ուղեկցողների խմբում էին ՀՀ ԱԺ պատգամավորներ Զարուհի Արեւշատյանը, Վլադիմիր Դարբինյանը, Կամո Արեյանը:

Ռուսական սահմանապահ զորքերի Արտաշատի սահմանապահ ջոկատում Պետդումայի պատվիրակությանն ընդունեցին ջոկատի հրամանատար, գնդապետ Իգոր Նիկիտինը, «տանտիրոջ» իրավունքով՝ Արարատի մարզպետ Դավիթ Զաղոյանը, ջոկատի այլ սպաներ եւ մարզի պատասխանատու աշխատողներ:

Գնդապետ Իգոր Նիկիտինը համառոտակի զեկուցեց ջոկատի կազմավորումից հետո նրա անցած ուղու, ձեռք բերած արդյունքների, առօրյայի, զինվորների եւ սպաների կենցաղի, սոցիալական վիճակի մասին: Խորհրդարանականները մանրամասնորեն ծանոթացան զինվորների ուսուցման եւ հանգստի պայմաններին, զրուցեցին սպաների ընտանիքների անդամների հետ, տվեցին բազմաթիվ հարցեր եւ իրենք էլ պատասխանեցին ոչ քիչ հարցերի:

Հյուրերը եղան սահմանամերձ գոտում, ջոկատի հրածգարանում, այցելեցին Խոր Վիրապ եւ վերադարձան Երեւան՝ օրվա վերջին Մատենադարան եւ Մայր աթոռ այցելելու ծրագրով:

Հանդիպումներն արտաշատյան հողում բացառիկ ջերմ էին եւ վերածվեցին հայ-ռուսական բարեկամության իսկական տոնի: Ռուս խորհրդարանականները, իմ տպավորությամբ, լիովին համոզվեցին, որ իրենց զինվորներն այստեղ գտնվում են հյուրազաս միջավայրում, Ռուսաստանին ու ռուս ժողովրդին ջերմագին զգացումներով վերաբերվող բարեկամ երկրի տարածքում, ուր նրանք պաշտպանում են ոչ միայն ԱՊՀ երկրների հայ-թուրքական սահմանային հատվածը, այլ՝ առաջին հերթին Ռուսաստանի եւ Հայաստանի պետական շահերը, երկու ժողովուրդների դարավոր եղբայրությունը:

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Կալանավայրերը ուշադրության կենտրոնում

Հրազդանի կալանավայրում արտադրամասի բացում եւ մասնագիտական ուսուցում

ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատար Ռոբերտ Ռոբինսոնի, ժողովրդավարության եւ մարդու իրավունքների կենտրոնի տնօրեն Վլադիմիր Կարմիրշալյանի եւ ՆԳ եւ ԱԱ նախարարության համագործակցությամբ, դեռեւս նախորդ տարվանից իրականացվում է «Մարդու իրավունքները կալանավայրում» միջազգային ծրագիր, եւ այդ ուղղությամբ կազմակերպվում համատեղ միջոցառումներ:

Միջոցառումներից առաջինը ուղիղ հեռախոսակապի ստեղծումն էր Հայաստանի բոլոր կալանավայրերի հետ, իսկ երկրորդը կայացավ երեկ: Հրազդանի քրեական պատիժների իրականացման 18/4 հիմնարկությունում տեղի ունեցավ կալանավորների մասնագիտական ուսուցման արտադրամասի բացման արարողություն, որին ներկա էին Հայաստանում հավատարմագրված միջազգային կազմակերպությունների, դեսպանատների, ժողովրդավարության, մարդու իրավունքների կենտրոնի, ՄԱԿ-ի փախստականների հարցերով գրասենյակի ներկայացուցիչները, ՆԳ եւ ԱԱ փոխնախարար Հովհաննես Վարյանը, կալանավայրերի վարչության պետ Մուշեղ Սաղաթելյանը եւ նախարարության այլ աշխատակիցներ: Պարոն Կարմիրշալյանը արտադրամասի բացումը գնահատեց որպես մարդու իրավունքների գործնական պաշտպանության երեւույթ, նշեց, որ կալանավորները, զրկված լինելով մի շարք քաղաքական եւ քաղաքացիական իրավունքներից, կազմում են բնակչության խոցելի մասը, հույս հայտնելով, որ արտադրամասի ստեղծումով մասնակիորեն կլուծվեն կալանավորների մի շարք խնդիրներ, նրանք կապահովվեն աշխատատեղերով եւ, ամենակարեւորը, ձեռք կբերեն նոր մասնագիտություն:

Արտադրամասում կալանավորները վանակատի (օբսիդիան) անմշակ քարերը տաշում են տարբեր մակերեսներով, մշակում, պատրաստում դեսլներ, փայլեցնում՝ վերջնական արդյունքում պատրաստելով գրասենյակային-գրենական պիտույքներ, որոնցից ընտրվածները նվիրվեցին ներկաներին: Կաթոլիկների միացյալ օգնության կազմակերպության եւ Համաշխարհային պարենի ծրագիրը մոտ 150 պահածո նվիրեց բանտարկյալներին: Պարոն Կարմիրշալյանի հավաստմամբ, հաջողության դեպքում այս ծրագիրը կիրականացվի նաեւ կանանց եւ անչափահասների կալանավայրում, ընդգծեց, որ մոտ ժամանակներս կիրականացվի եւս մեկ ծրագիր, որի նպատակն է կալանավայրերին աղահովել բանջարաոցային սերմերով՝ ամռանը այդ ձեւով կալանավորների կարիքները հոգալու համար:

ԱՐԱԲՍ ՍԱՖԱՐՅԱՆ

«ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25/1»

Վկաներից մեկը ճանաչեց... հարեւանին

ՀՀ Գերագույն դատարանում ընթացող «Սեպտեմբերի 25Ա» գործի քննությունը շարունակվեց ամբաստանյալ Հաբեթ Պետրոսյանի կնոջ՝ Մարինե Ղազարյանի հարցաքննությամբ: Վերջինս, թեեւ կարող էր հրաժարվել ամուսնու առնչությամբ վկայություն տալուց, դատարանին հայտնեց, որ սեպտեմբերի 25-ին, լսելով ԱԺ շենքի մոտ կատարվող դեղերի մասին, շտապել է ԱԺՄ, որտեղ մեկին չգտնելով, գնացել Անկախության հրապարակ եւ ժամը 21-ին մոտ, ցուցարարների մեջ հայտնաբերելով ամուսնուն, վերջինիս հետ «հանգիստ վերադարձել տուն»: Սեպտեմբերի 29-ին «մի քանի անձնք» տարել են ամուսնուն: Գիշերը (ժամը 2-ին) վերադարձել են, պահանջել Պետրոսյանի «այն օրվա» հագուստը: Վերջինիս մաքուր լինելու հանգամանքը զայրացրել է այցելուներին, նրանք կողոպտել, վիրավորել ու քաշքշել են ամբաստանյալի կնոջն ու մորը: Պահանջել են գրել, որ Հաբեթի հագուստն արյունոտ էր՝ պնդելով, որ ամուսինը խոստովանել է այդ իրողությունը, սպառնացել են. «Եթե չգրես, ամուսնուդ երեսը չես տեսնի»: Բնակարանը խուզարկելով եւ ոչինչ (մասնավորապես զենք), չհայտնաբերելով՝ տարել են ամբաստանյալի հագուստի մի քանի տարեր, այդ թվում Ղարաբաղից մնացած զինվորական համազգեստը:

Հաբեթի կալանումից 5 օր անց Ղազարյանին վերջապես հայտնի է դարձել ամուսնու գտնվելու վայրը (քննչական մեկուսարան): Շտապել է ներկայանալ, կրկին «հարցաքննվել է» հիշյալ մեթոդներով: Արդյունքը՝ քննիչների թելադրանքով կորզված մի ցուցմունք, որի հեղինակը, մասնավորապես, Հաբեթ Պետրոսյանի հագուստն արյունոտ է եղել:

Դատավորը կես առ կես ստուգեց Ղազարյանի նախաքննական ցուցմունքների համապատասխանությունն իրականությանը, եւ դատապաշտպանների մի քանի հարցերից հետո դահլիճ հրավիրվեց հաջորդ վկան՝ ՀՀ գլխավոր դատախազության հացամթերումների վարչության պետ Արքակ Հովհաննիսյանը: Վերջինս գործին առնչվում է այնքանով, որքանով ամբաստանյալ Մկրտիչ Մեղավորյանի հարեւանն է, իսկ մյուս ամբաստանյալներին, բնականաբար, չի ճանաչում: Պարոն Հովհաննիսյանը պատմեց, որ սեպտեմբերի 25-ի ժամը 19-ի մերձակայքում մեքենայով տուն ուղեկցելով իրեն այցելած քրոջը, ճանապարհին վերցրել է եղբորը եւ վերջինիս հետ վերադարձել տուն: Երրորդ հարկի աստիճաններին, մոտավորապես ժամը 20-ին, հանդիպել է Մեղավորյանին եւ մի քանի խոսք փոխանակել հետը: Քանի որ Հովհաննիսյանի նախաքննական ցուցմունքում հանդիպումը վերագրված էր 20:30-ից 21:00-ին, դատավորը փորձեց պարզել հակասության պատճառը: Վերջինս անհայտ մնաց, սակայն վկան պնդեց, որ հանդիպման ժամին կրակոցներ էին լսվում ԱԺ տարածքից: Դատապաշտպանները հարցեր չունեին, մասնավորապես Ռուբեն Սահակյանն ասաց, «Կրակոցներն ինձ բավական էին»:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

«Հայկական ժամանակ»-ին՝ քարի մաղթանքներ եւ ուղղում

Անկեղծ ուրախությամբ նկատեցի հայրենական ամենօրյա մամուլի ընտանիքի հավելումը: Թերթի խմբագրակազմին ցանկանում եմ ամենայն բարիք եւ հաջողություն:

Տարակուսանքով, սակայն, պետք է նշեմ, որ «Հայկական ժամանակի» ելքային տվյալների մեջ նշված է նաեւ իմ անունը իբրեւ էջադրման ոճի եւ տառաձեւերի հեղինակի:

Իր ոճով եւ կատարմամբ անփույթ էջադրումը, տեխնիկական թերություններով աղավաղված տառերը, թերթի անվանման անճիշտ օգտագործումը իմ աշխատանքը չեն: Ուստի, մինչեւ թերթի տեխնիկական եւ գեղարվեստական կարողությունների ակնկալվող բարելավումը, հարգելի ընթերցողին խնդրում եմ երկրորդ էջի ստորին ձախ անկյունում ելքային տոմսակի 6-7 տողերի փոխարեն կարդալ. «Թերթի ոճը խմբագրության»:

ՊԱՎԵԼ ԴԱԼԼԱՐՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ազգային

- Ամերիկայի Արեւելյան թեմը, որն ստեղծվել է Խրիմյան Հայրիկ կաթողիկոսի կողմից, 1898 թ., մինչեւ օրս իր կարեւոր դերն է կատարում լայնատարած Ամերիկայում ափոված մեր հայրենակիցներին միավորելու, իրենց հոգեւոր-մշակութային ավանդությունները, մանավանդ իրենց ազգային ինքնությունը չկորցնելու եւ ոգեւորելու գործում: 1990 թ.-ից ի վեր, Չեր՝ թեմի հոգեւոր առաջնորդ ընտրվելուց հետո, Դուք ոչ միայն շարունակեցիք թեմի բարի ավանդույթները, այլեւ շատ արժանահիշատակ ձեռնարկներով աշխուժության եւ բարգավաճման մի նոր շունչ հաղորդեցիք նրա առօրյային:

- Իրավ, Ամերիկայի Արեւելյան թեմը շուտով ոտքի է տոնե իր հիմնադրության 100-ամյակը: Անիկա իր գոյության ընթացքին անգնահատելի գործ կատարած է հայապահպանության, մեր հայրենակիցներուն իրենց հավատքին ամուր կապելու գործին մեջ: Իսկ վերջին տարիներու աշխատանքներու կամ ծրագիրներու մասին կուզեմ հետել, որ մենք փորձեցիք նախ եղած բաժանումները զորացնել: Այժմ ունինք Քրիստոնեական դաստիարակության բաժանումը, հայ լեզվի եւ մշակույթի բաժանումը, ունինք նաեւ «Զոհրաբ» տեղեկատվության կենտրոնը, կան նաեւ Երգչախումբերու եւ Տիկնանց միությանց ընդհանուր վարչությունները:

Այս բաժանումներու կարգին ավելցուցիք նաեւ Երիտասարդաց բաժանումը, որ Հայ եկեղեցվո երիտասարդներու հետ առնչվող կապերը Ամերիկայի մեջ կփորձե ավելի զորացնել եւ գործուն դարձնել, ծրագիրներ կազմակերպել համայնքներեն ներս, որպեսզի ամերիկահայ երիտասարդները ավելի մոտ զգան Հայ եկեղեցիին եւ այդ եկեղեցվո մեջ գործոն դեր ունենան, գիտնան իրենց ավանդությունը իբրեւ հայ քրիստոնյաներ եւ ինքզինքնին ավելի մոտ զգան իրենց արմատներուն:

Երիտասարդացի կողքին հաստատեցիք նաեւ ընկերային ծառայության բաժանումը, որուն առաքելությունն է մեր բոլոր ծուխերուն, համայնքներուն ուղղություն տալ, որպեսզի ամեն համայնք, ամեն ծուխ, թեմի սահմաններեն ներս, կարողանա ընկերային ծառայության իր առաքելությունը կատարել, որովհետեւ անիկա եկեղեցվո առաքելության մաս կազմե օգնության ձեռք երկարել անձի, խումբի, որոնք կարիք ունին:

Այս ամենեն զատ փորձեցիք վերանորոգել Ս. Վարդան մայր տաճարը, որ 1968 թ. Ամենայն հայոց Վեհափառ հայրապետ Վազգեն Ա երջանկահիշատակ կաթողիկոսին կողմե օծված է: Անիկա գեղեցիկ, հայկական ճարտարապետական ոճով շինված տաճար մըն է Նյու Յորք քաղաքին կենտրոնը եւ իր ոճով, իր հայկական գմբեթով աչքի կզարնե: Նյու Յորք մեծ քաղաքին մեջ Ս. Վարդան մայր տաճարին ներկայությունը լավագույն փաստն է Ամերիկայի մեջ հայ հոգեւոր, մշակութային կյանքի ներկայության: Տաճարի վերանորոգության զուգընթաց կկատարենք նաեւ առաջնորդարանի շենքին վերանորոգումը: Շատ նվիրյալ եւ գիտակից անձեր որոն Գեւորգ Հովնանյանի գլխավորությամբ, քով-քովի բերին, եւ կատարվեցան այս սքանչելի գործերը:

Թեմը ունի նաեւ Ս. Ներսես Աստվածաբանական ճեմարանը, հաստատված 1961 թ., որ կոչատրաստվին հոգեւորականներ, հոգեւոր սպասավորներ ծառայելու համար մեր եկեղեցիներեն ներս: Վերջին հինգ-վեց տարիներուն փորձեցիք Ս. Ներսես Աստվածաբանական ճեմարանը եւս զորացնել: Մտահոգությունը այն է, որ Ճեմարանը ունենա ուսումնական ակադեմիկ ծրագիրներ: Ս. Ներսես աստվածաբանական ճեմարանի կողքին կծրագրենք հաստատել աստվածաբանական եւ նաեւ ծիսական ակադեմիա, որ գիտնականները հոգեւորական թե աշխարհական, կարողանան ուսումնասիրել մեր եկեղեցվո ծեսը, աստվածաբանությունը, պատմությունը, կարդեպի Մ. Նահանգներ: Ինչպիսի՞ միջոցառումներ են կատարվում նրանց համախմբելու եւ կամ աջակցելու ուղղությամբ:

- Ամերիկայի մեջ օրե-օր հայ ժողովուրդին թիվը կըտանա: Այս 20-25 տարիներու ընթացքին նոր գաղթականներու հոսանք մը սկսավ Միջին Արեւելքի երկիրներեն սկսյալ Պարսկաստանեն, Լիբանանեն, Սուրիայեն, Հորդանանեն, Եգիպտոսեն եւ մինչեւ օրս կըտարունակվի: Գաղթականներու հոսանք մը սկսավ նաեւ Արեւելյան Եվրոպայեն՝ ինչպես Բուլղարիայեն, Ռումինիայեն: Եկան նաեւ Թուրքիայեն, իսկ այս վերջին տարիներուն՝ Հայաստանեն, Ռուսիայեն, Բաքուեն հայտնի դեպքերեն ետ: Եվ այսպիսով խառն եւ դժվարին կացություն մը ստեղծված է: Բոլորն ալ հայեր են, Հայ եկեղեցվո զավակներ՝ եկած տարբեր միջավայրերեն եւ տարբեր մշակներ, հարաբերություններ ունին: Մեր աշխատանքն է այս ամբողջ զանազանության մեջ միասնականություն հաստատել: Եվ այդ միասնականությունը մենք կրնանք հաստատել Ս. Եկեղեցվո հավատքով, հայրենիքի հանդեպ եղած ջերմ սիրով՝ եւ նաեւ մեր մշակույթով ու մեր լեզվով: Այս առաքելությամբ մենք սկսած ենք տարբեր շրջաններու մեջ նոր համայնքներ, նոր ծուխեր ստեղծել: Այս վերջին տարիներուն յոթ-ութ նոր համայնքներ հաստատված են:

Այս բոլոր ձեռնարկները կփորձենք ամբողջացնել յուրաքանչյուր տարվա ընթացքին նոր թեմայի մը վրա կենտրոնանալով: Այսպես, մենք ունեցանք ընտանիքի տարի, որով ցանկացանք ընտանիքի կարեւորությունը հայ կյանքեն ներս շեշտել: Այդ կապակցությամբ ծրագիրներ, հրատարակություններ կարողացանք կազմակերպել մեր գաղութներու մեջ: Երկու տարի առաջ հայտարարած էինք Ս. Գրքի տարի: Այդ առիթով Ս. Գիրք հրատարակեցինք, մեր եկեղեցիներուն մեջ ս. գրային սերտողություններ հաստատեցինք՝ շեշտելով Ս. Գրքին կարեւորությունը հայ հավատացյալի կյանքեն ներս: Անցյալ տարի հայտարարած էինք երիտասարդության տարի, որուն ընթացքեն ջանացինք հայ եկեղեցվո կյանքեն ներս երիտասարդներու մասնակցությունը շեշտել: Իսկ այս տարին, 1997-ը, հայտարարած ենք առաքելության տարի: Եվ այս տարվա ընթացքին ոչինչ փորձենք ամեն մեկ հայ հավատացյալի մեջ արթնցնել այն գիտակցությունը, թե մեզմե ամեն մեկը, իբրեւ հայ քրիստոնյա, առաքելություն ունի կատարելիք, այսինքն, եթե գիտնանք մեր Եկեղեցվո ավանդույթները, սովորությունները, հավատքը, այդ հավատքով ոչինչ պետք է այդ հավատքը ուրիշին փոխանցենք:

Ես, հեշտաբար, կխոստովանիմ, որ այս անցնող տարիները, ինչպես հայրենիքի կյանքեն ներս, թեմի կյանքեն ներս եւս, վերազարթոնքի տարիներ էին, եւ կաղոթեմ ու կհուսամ, որ այդ մթնոլորտը, զգացումները կըտունակվին, այդ զգացումները գործնականի կվերածվին:

Շարունակը վաղը

ԹԱՄԱՐ ԳԵՂԱՄՅԱՆԸ

ԱՄՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄ

Խաչատուր եպիսկոպոս Պարսամյան. Ամեն մի հայ առաքելություն ունի կատարելիք

Մ. Նահանգների Արեւելյան թեմի առաջնորդ Խաչատուր եպիսկոպոս Պարսամյանն իր հոգեւոր ծառայության 25 տարիների մեծ մասը նվիրել է այդ թեմի հայ հավատացյալների ազգային-հոգեւոր ծառայության գործին: Վերջին տարիներին թեմում կատարված աշխատանքների մասին է հարցազրույցը սրբազանի հետ:



հետեւաբար տարբեր մտածելաձեւ, հոգեբանություն եւ երբեմն նույնիսկ տարբեր սովորություններ ունին: Մեր աշխատանքն է այս ամբողջ զանազանության մեջ միասնականություն հաստատել: Եվ այդ միասնականությունը մենք կրնանք հաստատել Ս. Եկեղեցվո հավատքով, հայրենիքի հանդեպ եղած ջերմ սիրով՝ եւ նաեւ մեր մշակույթով ու մեր լեզվով: Այս առաքելությամբ մենք սկսած ենք տարբեր շրջաններու մեջ նոր համայնքներ, նոր ծուխեր ստեղծել: Այս վերջին տարիներուն յոթ-ութ նոր համայնքներ հաստատված են:

Այս բոլոր ձեռնարկները կփորձենք ամբողջացնել յուրաքանչյուր տարվա ընթացքին նոր թեմայի մը վրա կենտրոնանալով: Այսպես, մենք ունեցանք ընտանիքի տարի, որով ցանկացանք ընտանիքի կարեւորությունը հայ կյանքեն ներս շեշտել: Այդ կապակցությամբ ծրագիրներ, հրատարակություններ կարողացանք կազմակերպել մեր գաղութներու մեջ: Երկու տարի առաջ հայտարարած էինք Ս. Գրքի տարի: Այդ առիթով Ս. Գիրք հրատարակեցինք, մեր եկեղեցիներուն մեջ ս. գրային սերտողություններ հաստատեցինք՝ շեշտելով Ս. Գրքին կարեւորությունը հայ հավատացյալի կյանքեն ներս: Անցյալ տարի հայտարարած էինք երիտասարդության տարի, որուն ընթացքեն ջանացինք հայ եկեղեցվո կյանքեն ներս երիտասարդներու մասնակցությունը շեշտել: Իսկ այս տարին, 1997-ը, հայտարարած ենք առաքելության տարի: Եվ այս տարվա ընթացքին ոչինչ փորձենք ամեն մեկ հայ հավատացյալի մեջ արթնցնել այն գիտակցությունը, թե մեզմե ամեն մեկը, իբրեւ հայ քրիստոնյա, առաքելություն ունի կատարելիք, այսինքն, եթե գիտնանք մեր Եկեղեցվո ավանդույթները, սովորությունները, հավատքը, այդ հավատքով ոչինչ պետք է այդ հավատքը ուրիշին փոխանցենք:

Ես, հեշտաբար, կխոստովանիմ, որ այս անցնող տարիները, ինչպես հայրենիքի կյանքեն ներս, թեմի կյանքեն ներս եւս, վերազարթոնքի տարիներ էին, եւ կաղոթեմ ու կհուսամ, որ այդ մթնոլորտը, զգացումները կըտունակվին, այդ զգացումները գործնականի կվերածվին:

Շարունակը վաղը

ԹԱՄԱՐ ԳԵՂԱՄՅԱՆԸ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինչից ենք ազատագրվում եւ ինչի համար

«Ժամանակն իր բավղից դուրս է եկել» համլետյան խոսքերը դարձել են ավարտվող դարի, նրանում տիրող մարդկային փոխհարաբերությունների վերարժեքավորման խորհրդանիշը: Բարոյական այս ճգնթի ու միաձայնության ժամանակներում, երբ խզվում են սերունդների կամրջող կապերը, մտաբերում եմ Պողոս Առաքյալի խոսքերն՝ ուղղված իր աշակերտ Տիմոթեոսին. «Գիտցի՛ր, թե վերջին օրերը չար ժամանակներ պիտի գան. վասնզի մարդիկ պիտի ըլլան... ավելի հեշտասեր, քան թե աստվածասեր, որոնք աստվածապաշտության կերպարանքը ունին, բայց անոր զորությունը ուրացած են»:

Հրաժարվելով նախորդ սերնդի ողջ կենսափորձից, հախուռն մերժելով նրա արժեքներն ու իդեալները, աննկատելիորեն հեռանում ենք հայի ցեղասոհմիկ նկարագրից, բքացնող անտարբերությամբ անջրպետվում մեր պատմական հիշողությունից: Անդառնալի այդ հոգեւոր կորուստը փորձում ենք լրացնել զանազան արհեստական գրգիռներով, կենսական էներգիայի աննպաստակ հորդումներով: Շատերը դրանում ոչ մի տարօրինակ բան չեն տեսնում: Երիտասարդությունը ձգտում է վճռականորեն ձերբազատվել ծնողական «կապանքներից» ու մանկամտացնող մանր խնամառությունից, ձեռք բերել տնտեսական ինքնուրույնություն, կյանքի փոքրկահույզ ծովում նավարկելու ազատություն: Օրավուր աճում է խորթացածությունը ծնողների ու զավակների միջեւ, անհաղորդելիությունն ու եսական մյուս ախտերը դառնում են մարդկային փոխհարաբերությունների միակ բովանդակությունն ու իմաստը: Լրջորեն վտանգվում է հայ ծնողի արժանավայել գոյության բարոյական հիմքն ու հեռանկարը: Ներընտանեկան օտարվածության պատճառները ոմանք փնտրում են իրենց եւ ուրիշների երեխաների միջեւ անանցնելի պատնեշ ստեղծելու ուղիներում: Ուրիշներից պատնեշվելու ցանկացած փորձ դատապարտված է անհաջողության, քանի որ բոլոր «ուրիշ» երեխաները միշտ էլ ինչ-որ ծնողի սիրասուն զավակներն են: Հնարավոր չէ պահպանել սեփական «փոքրիկ» աշխարհը՝ այլ հայ ընտանիքներից օտարվելու, առավել եւս իրենց եւ ուրիշ երեխաների միջեւ ինչ-որ դասախավային պատնեշներ կառուցելու գնով: Ինքնախաբկանք է՝ երանգավորված ամեն կերպ խավության նոխազ փնտրելու արատավոր մտայնությամբ:

Միաժամանակ, այս հոգեբանությունը ոչ այլ ինչ է, քան հայ հասարակության շերտավորման անբարոյականացնող հավասկան աղացույցը: Գաղտնիք չէ, որ մեզանում բնակչության ավելի քան 10 տոկոսը տնօրինում է երկրի ողջ հարստության կեսից ավելին, դարձել է նոր բարքերի «օրենսդիրը»: Այդ 10 տոկոսը՝ իր սոցիալական ցինիզմով ու մերկաղարանոց շահի անզուսպ պաշտամունքով, ապացուցում է, թե ով է «կյանքի իսկական տերը»: Նրան են հասցեագրված հայտնի սոցիոլոգի խոսքերը. «Օրհնյալ լինեն ցինիկները, քանի որ միայն նրանք ունեն այն, ինչ անհրաժեշտ է կենսական հաջողության հասնելու համար»: Իսկ ժողովո՞ւրդը... ժողովուրդը միշտ եղել է «մանրադրամ» նրանց ձեռքում:

Նորահարուս դուրսրծուկների ողջ կենսաոճը՝ իրենց նյութական հնարավորությունների հրապարակավ ցուցադրումներով, լրջորեն սպառնում է հայ ընտանիքի ցեղասոհմիկ նկարագրին, գործարարության ազատական բարոյականության մրցակցային ոգուն: «Կյանքը,-բարբառում է վայրենաբարո ձեռներեցը,-իսկական ջունգլի է, որտեղ կամ դու ես ուտում, կամ քեզ են ուտում: Իսկ հաղթողը միշտ էլ ոչնչացնում է թույլին»: Կենսահաջողակության այս փիլիսոփայությամբ ողջ հասարակությունը բաժանվում է «հաղթողների», «պարտվողների» եւ «շարքային, իրենից որեւէ արժեք չներկայացնող անդեմ մարդկանց»: «Հաղթողը» շրջապատված է հասարակական ուշադրությամբ ու պատվով, իսկ «պարտվողը»՝ անտարբերությամբ, բարոյապես ոչնչացնող «ներողամտությամբ» եւ «մեծահոգի» արհամարհանքով: Հաջողակ չլինելը՝ աններելի ծնողական արատ է դիտվում բազմաթիվ երեխաների կողմից: Հաճախ մեզանից շատերի մեջ դա առաջացնում է մեղքի անտանելի զգացողություն, որը պատճառ է դառնում տեսական դեպրեսիայի, հիվանդությունների, եւ, նույնիսկ, անժամանակ մահվան:

Վաղնջական ժամանակներից գավակապաշտությունը եղել է հայի բարոյական գոյատեւման առանցքը, նրա պատմական տոկունության գաղտնիքը: Ինչպես ասում է հայ ժողովուրդը, «ծերերի խրատը դուրս չի գա, գնա՝ գնա, դարձ չունի»: Ինչպիսի՞ դեպքերում, ինչպիսի՞ հանգամանքներ ստիպեցին, որ ինքներս ինքներս մեզ ասենք, թե մեր ծերերի խրատը դուրս է գալիս, դարձ ունի

ԱԶԳ

Միջազգային

«Վաշինգտոն փոստում» տպագրված հոդվածն այն մասին, որ չինական դեսպանատունը օգտագործվում էր «օտար» դրամական օժանդակության դեմոկրատական կուսակցության գանձարան ներկրելու համար, մեծ հետաքրքրություն է առաջացրել: Մանավանդ որ այնտեղ հիշատակվում է Ուոթերգեյթի սկանդալի բացահայտիչ Բոբ Վուդվորդի անունը:

Արկանզասի ամենամեծ բանկերից մեկի բաժնետերը դառնալով, Քլինթոնին բաջածանոթ էր, եւ վերջինս նրա միջոցով էր կաղ պահպանում չինական համայնքի հետ: Երբ 1985-ին դեռ կառավարիչ եղած ժամանակ Քլինթոնն այցելել է Հոնկոնգ, նրան հյուրասիրողներից մեկը Լիոդոյի գործադիրներից Ջոն Հուանգ անունով մի երիտասարդ է եղել:

Զուգադիպություն է, թե ոչ, բայց Արկանզասի նահանգապետ Քլինթոնի ընտրվելու առնչությամբ: Այդ հարաբերությունները էլ ավելի են սերտացել 1994-ի հուլիսին, երբ Հուանգն ընտրվել է միջազգային տնտեսական բաղադրությունների առեւտրի բարձրագույն փոխօգնական: Այդ պաշտոնի բերումով նա «խիստ գաղտնի» հանդիպումների է ներկա եղել, 18 ամսում մասնակցել է 37 «հետախուզական բրիֆինգների»: 1995-ի հունվարի 27-ին

ԱՄՆ

Դրամահավաքման առնչությունները կարո՞ղ են վերածվել լրտեսականի

Վերջին երեքուկես նախագահների ընտրությունների անցկացման համար դրամահավաքների հարցը նկատելիորեն սուր բնույթ է ստացել: Ընդդիմադիր կուսակցությունները ու մամուլը ամեն կերպ փորձում են թափանցել այդ գումարների գոյացման «գաղտնարանները»: Այս հարցում հարվածի տակ են առաջին հերթին Մեծ Բրիտանիայի վարչապետ Ջոն Մեյջորը, որը նախապատրաստվում է ընտրությունների, եւ Միացյալ Նահանգների նախագահ Բիլ Քլինթոնը, որը նոր է թոթափել այդ փորձաքննությունը: Ինչպես տրանից առաջ ԱՄՆ նախագահի հետ ոմն Թամրազի հարաբերությունների առնչությամբ նշել էինք մեր թերթում, Սոիտակ տունն ու ՀՖԲ-ն զբաղվում են այդ հարցով: «Նյուզուիքի» թարգմանաբար տպագրվող հոդվածը նույնպես անդրադառնում է դրան:



Չնայած չինական կողմն ընդհանրապես հերքում է ամբողջ պատմությունը, իսկ Սոիտակ տունն առայժմ անտեղյակ է ձեւանում, պաշտոնական որոշ աղբյուրներ հավաստիացրել են «Նյուզուիքին», որ արդարադատության նախարարությունն զբաղվում է այդ հարցով: Իսկ նախագահն իր հերթին ընդունել է, որ «Միացյալ Նահանգների համար խիստ լուրջ հարց կլինի, եթե պարզվի, որ որեւէ արտասահմանյան երկիր փորձում է ֆինանսավորել մեր քաղաքական կուսակցություններից որեւէ մեկին, ինչ նպատակով էլ որ դա արված լինի»:

Դա իրոք սկանդալային պատմություն կլինի առաջին հերթին Քլինթոնի համար: Առաջադրված հարցը հետեւյալն է. ի՞նչ էր անում Ջոն Հուանգը չինական դեսպանատանը: Առայժմ պարզվել է, որ նա ավելի քան մեկ միլիոն դոլարի ներդրում է կատարել ընտրարավին: Նա միաժամանակ աշխատել է Ինդոնեզիայի եւ Արկանզասի Ռիադի ընտանիքի համար, որը Ջակարտայում Լիոդո Գրուպ միավորման տերն ու տնօրենն է: Հետաքննողներն առաջին հերթին ցանկանում են պարզել, թե արդյոք արտասահմանյան ներդրումներն ու շահերը վերջին հաշվով չե՞ն հետաքրքրում նաեւ քաղաքական ազդեցության նպատակներ: Այնպես որ ընտրարավի համար դրամահավաքի սկանդալից գործը կարող է վերաճել լրտեսականի:

Չինացիները տասնամյակներ շարունակ փորձել են թափանցել Ամերիկա, լրտեսել այնպիսի գործակալների միջոցով, որոնք ընդգրկված են եղել այնպես կոչված «կուսակցության հետախուզական վարչությունում»: Պեկինը սովորաբար այդ նպատակով հավաքագրում է արտասահմանում որոշ դիրքի հասած չինացիների:

Առայժմ դեռ պարզ չէ, թե ինչ կապ կա Ռիադի ընտանիքի, Հուանգի եւ չինական կառավարության միջեւ, բայց ըստ մասնագետների, նրանք կարող են շատ լավ «հարմարվել» մի ընդհանուր պատկերի մեջ:

1992-ին Քլինթոնի հաղթանակից հետո, չինացիները ցանկանում էին վաղ հասատել նոր վարչակարգի հետ: Պեկինը չէր թաքցնում իր համակրանքը Ջորջ Բուշի նկատմամբ, որը 70-ական թվերին այցելել էր Չինաստան: Մինչդեռ Քլինթոնը ավելի կարծր քաղաքականություն էր վարում եւ սպառնում ընդհանրապես խզել բնականոն առեւտրական հարաբերությունները Չինաստանի հետ մարդու իրավունքների կողմից խախտումների համար: Ռիադի ընտանիքը հնարավոր կաղավոր կարող էր դառնալ, քանի որ 1984-ին պարզվում է, որ 1992 թվի նոյեմբերի 7-ին, Քլինթոնի ընտրվելուց չորս օր հետո, չինական կառավարությանը պատկանող մի ընկերություն Չայնա Ռիսորսզ (Հոլդինգ) կոմպանին, Լիոդոյի սեփականությունը հանդիսացող հոնկոնգյան բանկերից մեկում գնել է կապիտալի 15 տոկոսը: Ամերիկյան հետախուզության տվյալներով, այդ ընկերությունը Պեկինի կողմից օգտագործվում է լրտեսական նպատակներով: Չայնա Ռիսորսզի եւ Լիոդոյի միջեւ հարաբերությունները կարող են անվնաս լինել, սակայն հստակ է, որ Չինաստանը մեծ ջանքեր է գործադրում Միացյալ Նահանգներում իր ազդեցության ոլորտը մեծացնելու համար: Լիոդոն Սոիտակ տուն թափանցելու հնարավորություն ուներ: 1993 թվի մարտի 9-ին Լիոդոյի «Բոսը» եւ ընտանիքի գլխավորը Մոխթար Ռիադին «խիստ անձնական եւ գաղտնի» նամակ է հղել Քլինթոնին, խնդրելով նրանից հրաժարվել Չինաստանի հանդեպ կիրառվող առեւտրական սահմանափակումներից: Մեկ ամիս անց, ապրիլի 19-ին Մոխթարի որդին Ջեյմսը (այժմ Լիոդոյի փոխնախագահը) Հուանգի ընկերակցությամբ այցելել է Քլինթոնին՝ օվալաձեւ սենյակում: Սոիտակ տան գրառումների մատյանում նշվում է, որ նրանք քննարկել են «Ամերիկա-Չինաստան հարաբերությունների» հետ առնչվող հարցեր: Լիոդոն միակը չէ, որ փորձում է ազդել Քլինթոնի «կարծր» քաղաքականության վրա: Բոինգի եւ Ամերիկն Էքսպրեսի նման ընկերությունները, որոնք ա՝նընդհատ նոր շուկաներ են ցանկանում նվաճել, նույնպես մեծ դեր են խաղում այդ երկրում: Այն, որ Հուանգը բաջածանոթ է Քլինթոններին, պարզվել է այն ժամանակ, երբ հայտնի է դարձել, որ Ջեյմս Ռիադի հետ 100 հազար դոլար է նվիրել 1993-ին Քլինթոնի նախագահ ընտրվելու առնչությամբ: Այդ հարաբերությունները էլ ավելի են սերտացել 1994-ի հուլիսին, երբ Հուանգն ընտրվել է միջազգային տնտեսական բաղադրության առեւտրի բարձրագույն փոխօգնական: Այդ պաշտոնի բերումով նա «խիստ գաղտնի» հանդիպումների է ներկա եղել, 18 ամսում մասնակցել է 37 «հետախուզական բրիֆինգների»: 1995-ի հունվարի 27-ին Չինաստանի վերաբերյալ բրիֆինգ ստանալով, նա խորհուրդ է տվել Տայվանի հետ առեւտրական կապերի ընդլայնման ծրագիրը հետաձգել: Դրանից առաջ 1994-ին, Քլինթոնը վերացրել էր Վիետնամի վերաբերյալ էմբարգոն, դարձյալ Լիոդոյի դդումով: Այսպիսով, Հուանգը եւ նրա նմանները օգնել են ձեւավորելու Ամերիկայի առեւտրական բաղադրությունը: 1995-ի սեպտեմբերին Հուանգը Քլինթոնին հասկացրել է, որ ավելի լավ կարող է ծառայել նրան, ասենք, դրամահավաք կազմակերպելով եւ այլն: Քլինթոնը նրան առաջարկել է դառնալ դեմոկրատական կուսակցության ընտրարավի գործողություններին կանխիկ դրամ հայթայթող մարմնի փոխնախագահ: Այդ առաքելությամբ Հուանգը «թակել» է մի շարք ասիական երկրների (Հնդկաստան, Ինդոնեզիա, Հարավային Կորեա, Տայլանդ) դռները: Արդյունքում, մայիսի 13-ին կազմակերպվել է ճաշկերույթ-հանդիպում Քլինթոնի հետ Շերատոն ու Հիլտոն հյուրանոցում, որտեղ մուտքի մեկ տոմսի արժեքը եղել է 12.500 դոլար: Չնայած ըստ փաստաբան Տի Քոքի, Հուանգը ոչ մի հակաօրինական արարք թույլ չի տվել, այնուամենայնիվ հետախուզության մասնագետները համոզված են, որ «չինացիները հետեւողականորեն փորձում են ձեռք բերել ամերիկյան գաղտնիքներ»: Նրանք «Նյուզուիքին» հայտնել են, որ իրենց ձեռքբերումների համաձայն, «առնվազն հազար ամերիկյան ընկերություններ օգտագործվում են չինացիների կողմից լրտեսական նպատակներով»: Նրանք պնդում են, որ այդ մասին բազմիցս տեղյակ են պահել կառավարությանը, սակայն ոչ ոք լուրջ ուշադրություն չի դարձրել դրան: Գուցե ա՞յժմ այդ ակնարկները կարժանանան համապատասխան ուշադրության:

«ՆՅՈՒԶՈՒՔ»

ԹԲԻԼԻՍԻ

Թենգիզ Աբլոտիա. «Շաբաթաթերթը «կմեռնի», եթե Կովկասի կյանքը հավասարապես չլուսաբանվի»

Անցյալ շաբաթ Թբիլիսիում լույս տեսավ «Լիցո կավկազկոյ նացիոնալնոստի» շաբաթաթերթի առաջին համարը: Թերթի գլխավոր խմբագիր Թենգիզ Աբլոտիան, որը ներկայացնում է նաեւ «Կավկազ-պրես» լրատվական գործակալությունը եւ BBC-ի ռուսական ծառայությունը, մեզ հետ զրույցում նշեց, թե համակովկասյան թերթ ունենալու գաղափարը միշտ էլ եղել է: Միշտ էլ հայ, վրացի, ադրբեջանցի լրագրողները խոսել են նման թերթի անհրաժեշտության մասին, սակայն երբեք դա իրականություն չէր դառնում: Այս թերթի գլխավոր սկզբունքը Հայաստանին, Վրաստանին, Ադրբեջանին եւ Հյուսիսային Կովկասին հավասարապես երկուական էջ տրամադրելն է: Եթե այդ սկզբունքը խախտվի, Թենգիզ Աբլոտիայի կարծիքով, թերթը կմեռնի: Երկրորդ խնդիրն այն է, որ թերթը գտնի իր ընթերցողին: Թեմատիկ առումով թերթը կլինի ազատ: Կտպագրվեն հետաքրքիր նյութեր, առանց քաղաքական համակրանքների կամ հակակրանքների: Շուտով կլինեն նաեւ շրջանային թղթակիցներ, իսկ աշխատակազմը կհամալրվի 23 լրագրողներով: Թենգիզն առայժմ տպագրում է իր ուժերով, առանց որեւէ կազմակերպության աջակցության: Առաջին համարում, բացի Թուրանի, Սնարի եւ տեփական լրատվությունից, հետաքրքիր հոդվածներ են տպագրվել շրջանային աշխարհաքաղաքական իրավիճակի մասին, վրաց-ռուսական, հայ-վրացական հարաբերությունների, Հայաստանի նոր վարչապետի եւ Բաքվում նրա նշանակման վերաբերյալ տրվող գնահատականների մասին: Տեղեկություններ են հրապարակվել նաեւ Ղարաբաղում առկա զենքի եւ զինամթերքի պաշարների մասին:

Շաբաթաթերթն առայժմ լույս է տեսել 1500 տպաքանակով, արժե մոտ 33 սենտ (40 թերթի կամ 158,5 դրամ) եւ արդեն իսկ տարածվում է երեք հանրապետություններում: Ա. Ս.

Ադրբեջանի բանտերում խոշտանգվում են հարաբերական խաղաղարարներ

ԲԱՔՈՒ, 2 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ANS-PRESS-ԿՈՎԿԱԶ-ՊՐԵՍ: Ռուսաստանի կողմից Ադրբեջանին հանձնված քաղաքական փախստականների նկատմամբ խոշտանգումներ եւ անմարդկային վերաբերմունքի կամ մարդկային արժանապատվության նվաստացման այլ ձեւեր են գործադրվում: Այսպիսի հայտարարություն է արել «Մեմորիալ» ռուսական իրավապաշտպան կազմակերպության ներկայացուցչուհի Սվետլանա Գանուշկինան: Բաքվում կայացած մամլո ասուլիսում, վկայակոչելով Ադրբեջանի իրավապաշտպան կազմակերպությունները, նա նաեւ հայտարարել է, որ հանրապետության կալանավայրերում պահվում են մեծ թվով քաղբանտարկյալներ, որոնց թվում Ռուսաստանի կողմից հանձնված անձինք: Նրա խոսքերով, երկրի բանտերում այդ մարդիկ մեռնում են կամ խելագարվում:

4-5 բալանոց երկրաշարժ Վրաստանում

ԵՐԵՎԱՆ, 2 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ- ՀՀ սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության դիտակայանները ապրիլի 2-ին, տեղական ժամանակով՝ ժամը 5-ն անց 26 րոպեին գրանցել են երկրաշարժ Վրաստանի տարածքում: Էպիկենտրոնում՝ Ցավա քաղաքից 20 կմ արեւմուտք, սահմանային ցնցման ուժգնությունը եղել է 4-5 բալ:

Պակիստանի նախագահի լիազորությունները կկրճատվեն

Իսկ քաղաքական որոշիչ դերը պատկանում է զինված ուժերին

Ապրիլի 1-ին Պակիստանի Դաշնային խորհուրդը միաձայն ընդունեց մի որոշում, ըստ որի երկրի սահմանադրությունը ենթարկվելու է որոշ փոփոխությունների՝ սահմանափակելով երկրի նախագահի լիազորությունները: Նոր օրենքի համաձայն, նախագահն այլեւս իրավասու չէ լուծարելու խորհրդարանը, պաշտոնանկ անել վարչապետին: Նոր օրենքով վերջ է դրվում տուրջ 10 տարի վարչապետի եւ նախագահի միջեւ մշտական առճակատմանը, որի ընթացքում չորս կառավարություն է հեռացվել իշխանությունից: Պակիստանի պառլամենտի նման որոշումը որոշիչ դեր կարող է ունենալ այդ երկրի քաղաքական զարգացումներում: Ըստ 1973 թ. ընդունված երկրի երկրորդ սահմանադրության, որը մշակվեց եւ հաստատվեց նախագահ Զուլֆաղար Ալի Բհուտոյի ջանքերով, Մեծ Բրիտանիայի եւ Հնդկաստանի օրինակով, վարչապետը հանդիսանում էր գործադիր իշխանության արտահայտման բարձրագույն աստիճանը: Սակայն Պակիստանում գեներալ Զիաուլհակի գլխավորած զինվորական վարչակարգի (1977-88 թթ.) օրոք նա սահմանադրությունում փոփոխություն կատարելով՝ խիստ քահմանափակեց վարչապետի իրավունքները: Այդ իրավունքների վերականգնմամբ խիստ շահագրգիռ, երկրի երկու խոշոր կուսակցությունները՝ «Մարդոմը» (ժողովուրդը) եւ «Մուսլեմ Լիգը» (մահմեդականի լիգա) լուրջ ջանքեր են գործադրել, անգամ փորձել են համատեղ ուժերով պայքարել այս ուղղությամբ, քանի որ ներկա դրությամբ վարչապետը մի կողմից հաշվի առնելով, այն, որ սահմանադրության մեջ կատարված փոփոխության հետեւանքով կտրուկ ընդլայնվել են նախագահի իրավունքները, մշտապես վերջինիս ցանկությամբ պաշտոնանկ լինելու սպառնալիքի տակ է, իսկ փորձը ցույց է տվել, որ նախագահը հաճախ է գործադրել այդ լծակը: Մյուս կողմից հայտնի է, որ երկրի ներքին, մասնավորապես արտաքին քաղաքականությունը որոշում էին զինված ուժերի հատուկ ծառայությունները: Հետեւաբար վարչապետին մնում էր իրականացնել նախապես որոշված քաղաքականություն: Թերեւս դա է պատճառը, որ բանակի եւ կառավարության հարաբերությունները ընթացել են տարաձայնությունների առկայությամբ:

Այժմ էլ, թեեւ հիշյալ օրենքով ընդլայնվում են վարչապետի լիազորությունները, եւ կառավարությունը, իր պես վարչապետի իրավական հարցերով խորհրդակցելիս է բացատրել, ապաստանատու է միայն ժողովրդի առաջ:

Այսուհանդերձ, Պակիստանում քաղաքական որոշիչ դերը պատկանում է զինված ուժերին, որոնք [illegible] քաղաքական [illegible] հետեւաբերում

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Մեր ներկայությունը ժամանակի մեջ

Լավ դերասաններ շատ ունենք, բայց, դարձ է, որ լավերի մեջ կան ամենալավերը, որոնք տեղական չափանիշներից բարձրանում են եւ միջազգային չափանիշով են որակվում: Պարզ է նաեւ, որ նրանց թիվը սովորաբար սահմանափակ է լինում մեկ-երկու հոգի: Փաստ Աստծո, որ վերջին տասնամյակներում երեքն էին նրանք, հայ երեք խոշոր դերասան, որոնք կոչվում էին Միհր (Ֆրունզիկ) Մկրտչյան, Սոս Սարգսյան եւ Խորեն Աբրահամյան: Հազար ափսոս, որ Միհր Մկրտչյանը անժամանակ վախճանվեց, իսկ լավերն ու լավագույնները միշտ էլ անժամանակ են հեռանում կյանքից, երբեմն նույնիսկ... ծերացած տարիքում են մահանում, իսկ Ֆրունզիկը ծեր էլ չէր բնավ...

Սոս Սարգսյանն այն դերասաններից է, որոնք իրենց ներկայությամբ շատ մեծ տեղ են գրավում բեմում, համարյա ամբողջովին տիրապետում են բեմական ողջ տարածքը, դառնում են միանձնյա իշխողներ եւ մի տեսակ լիություն են բերում իրենց հետ: Նրանք իրենց խոշոր անհատականությամբ դառնում են համահեղինակ, եթե բուն հեղինակը նույնիսկ ինքը՝ նոր մեծությամբ Շեքսպիրն է: Գեղեցկախոսություն չէ սասածս, չէ՞ որ մեծ դերասանը, դերը անցկացնելով իր «ես»-ի միջով, կարծես սեփականացնում է այն, դարձնում իրենը, եւ նրա խաղը այլեւս նման չէ որեւէ մեկի խաղին, այլապես ինչ խնդիր ունի հազարավոր յոգիների թվին եւս մեկը ավելացնելը եւ կամ հարյուրավոր Ջոն արհաների շարքում կանգնելը որպես շարքային եւ ոչ թե որպես «հրամանատար», բեմ այս բառը կարելի էր նաեւ չակերտների մեջ չդնել:

Հայոց բեմը շատ է տեսել մեծ դերասանների, մենք այս առումով բավական օժտված ենք: Սակայն նրանցից ոմանք բեմը նվաճում էին զուտ հմտաստեղծագործ բնագրով, իսկ եթե Փափազյան էր նա, առա խոշոր եւ ճշմարիտ բնագրին զուգադրում էր նաեւ խիստ ինքնեկեցը: Սոս Սարգսյանը նաեւ առանց բնագրի դերասան չէ, նա շատ լավ գիտի, թե ինչ է անում եւ հատկապես ինչու է անում: Նրանն յուրահատուկ է սեռական բնորոշմամբ «մտածող-մտավորական-ի-մտացակցությունը»:

Դերասանական այս երկու տիպերի մասին խոսելիս ես ոչ մեկին առաջնություն չեմ տալիս, որովհետեւ կարեւորը արդյունքն է բեմի վրա, իսկ այս «խոհանոցը» հանդիսատեսին բոլորովին չի հետաքրքրում: Ես զարմանում եմ ամենաշատ եւ այդ «խոհանոցի» մանրամասներն եմ փորձում նշել, բեմ տեղնուտեղը ավելացնեմ նաեւ, որ ուշադիր եւ լարված հանդիսատեսը բեմի վրա այդ «խոհանոցն» էլ է տեսնում:

Խորապես ազգային դերասան է Սոս Սարգսյանը, ես նկատի ունեմ ոչ միայն հայ մարդկանց մարմնավորման հարուստ ցանկը, այլ նաեւ նրա տաղանդի ուղղվածությունը, ասենք ինչ որ ազգային պատկանելության գիտակցությամբ անցկացնելու սկզբունքը, արդյունքում «հայացնելով», «տեղայնացնելով» նույնիսկ հանճարեղ Շեքսպիրի մարդկային հարերկրյան խնդիրները եւ նրա հերոսների բարդ ու փոփոխվող ներաշխարհը: Վարժանն է ասել, չէ՞, «Հյուգոյին մեջ բան կը կա, որ առաջ է, առաջին մեջ Նարեկացին, Նարեկացիին մեջ Աստված»:

Սոս Սարգսյանը, լինելով իր հոյակապ նախորդների՝ Վահրամ Փափազյանի, Հրաչյա Ներսիսյանի եւ այլոց ժառանգորդը, միաժամանակ բոլորովին նոր դպրոցի հավաստավորն է, հանգի 21-րդ դարն է մեր բի տակ եւ արդեն անհամբեր բախում է մեր դռները, որեմն ինչո՞ւ կրկնել հինը եւ ո՞ւմ է պետք թեկուզ նրա տաղանդավոր կրկնությունը:

Ռուս նշանավոր գրականագետ, ակադեմիկոս Դմիտրի Լիխաչովը հազար անգամ ճիշտ է, որ արվեստը ոչ թե զարգանում է, այլ հարստանում: «Վքար» վիպակի թեմականացման մասին է, որտեղ գլխավոր դերը կատարում էր Սոս Սարգսյանը: Նախ ուշ գլխի ընկա, որ ինքն է կատրյա էկրանի վրա, վերամարմնավորման այնպիսի հուժկու արտահայտություն էր դա, որ սկզբում, այո, չճանաչեցի նրան: Արդա ականատես եղա մի ցնցող դերակատարության, մի ցնցող դրամատիկ ճակատագրի, որ անջնջելի կմնա հիշողությանս մեջ:

Չեմ կարող հատուկ չնշել նաեւ Ն. Զարյանի «Հացավան» ներկայացման Մացակ Ավագյանի մոնումենտալ դերակատարումը: Այդ վեպը ոչ միայն գլուխ խորհրդային մտածելակերպով է գրված, իսկ ներկայացումը եւ հատկապես Սոս Սարգսյանի կերպարը էլի ոչ միայն գլուխ հակախորհրդային մեկնաբանությամբ էր ներկայացված: Հողի մարդու ճշմարտությունն էր հաստատում Սարգսյանը, այսինքն՝ ներկայացումը եւ դերակատարումը ճիշտ հակառակ բանն էին ցնդում, ինչին նվիրված էր վեպը: Ըստ վեպի՝ կուլակի բացասական մի կերպար, ըստ Սոս Սարգսյանի՝ ճիշտ հակառակը: Նա մարմնավորում էր հայ գինակամի աշխարհազգացողությունը, նրա բոլոր սերը ավանդական կենսաձեւի, ոչ անցողիկ, այլ մնայուն արժեքների հանդեպ:

Մի ամիս առաջ Բեյրութում ինձ բախտ վիճակվեց դիտելու Արթուր Միլլերի «Գինը» պիեսի բեմադրությունը, որի գլխավոր դերը կատարում էր Լիբանան հյուրախաղերի մեկնած Սոս Սարգսյանը: Հենց այդ դերակատարումն էլ ինձ ստիպեց գրիչ վերցնել ու կրկին գրել Սոսի մասին, նախ մեր հանդիսատեսին տեղյակ պահելու համար, որ նրա խաղացանկում ավելացել է եւս մի հրաշալի դերակատարում եւ արդա հայտնելու իմ հիացմունքը կոնկրետ այս դերակատարման առթիվ: Երբ կինեմատոգրաֆում Սոս Սարգսյանը Ժան Գաբենի նման կարծես քիչ ոչինչ չի անում, քայլում է, նայում, խոսում եւ բնավ չի «խաղում», բայց այդ «կարծես»-ի մեջ այնքան կյանք կա, այնքան կիրք ու ներքին շարժում, արդա թատրոնում նա զարմանալիորեն ուրիշ է, ուրիշ է ռեալիստական, ուրիշ է խաղաքոնը, խիստ թատերային, մեծ վրձնահարվածներով, հարուստ դիմախաղով, չափազանց դինամիկ ու երեւակայական ճկուն:

Ինչո՞ւ գրեցի իմ այս խոսքը, դերասանի հերթական հաջողությո՞ւնը գրանցելու համար, ինչպես սխալմամբ ասացի հիշ առաջ: Երեւի ոչ: Բուն դրդապատճառն այն է, որ այսօրվա ոգու տվի դայմաններում կրկին հիշեցնեմ հիշողությունը կորցրած շատ ու շատ մարդկանց, թե ինչպիսի հոգեւոր բարձր արժեքներ ունենք մենք, որոնք մեր ազգային հարստությունն են, մեր հոգատությունը եւ մեր ներկայությունը ժամանակի մեջ:

Իսկ երբ ներկայիս բացակայությունը գոհացնում է մեզ, երբ մեզ գոհացնում է մեր ժողովրդի արյան փոխված բաղադրությունը, երբ այսօրվա գլխավոր գործող անձը ձգտում է շարքի կամ լումպենի երեսը, արդա չվախենանք դարձ ճշմարտությունից եւ ցավ ի սիրտ խոստովանենք, որ շատով, շատ շատով դարս կենանք պատմության դատաստանից, ինչպես ժամանակին զգուշացնում էր Միհայել Նալբանդյանը, եւ ընդունակ կլինենք բնդունելու «դարի եւ գինու արժանավորությունը»: Արդո՞ Սոս Սարգսյանը եւ նրա նման մի բուռ մարդիկ կկարողանան այդ աղեսի առաջն առնել:

ՊԵՐՈ ՍԱՀԱԿՅԱՆ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

«Մամուլի թեմատիկ տեղեկագիր»

Հայաստանյան մամուլը հարստացավ եւս մեկ անունով. մարտի վերջին լույս տեսավ «Մամուլի թեմատիկ տեղեկագիր» հանդեսի առաջին համարը, 182 էջ ծավալով: «Երեւանի մամուլի ակումբ» ենթակառուցվածքի տեղեկագրից հետո սա երկրորդ դարբերականն է, որը ամբողջովին նվիրված է մամուլին, հատկապես հայաստանյան մամուլին: Հրատարակիչ է նշված Հայաստանի Ազգային գրադարանը, արտահանդեսը այն փաստորեն կազմել է տվել եւ հրատարակել անցյալ նոյեմբերին լուծարված տեղեկատվության նախարարությունը: Տեղեկագրի կազմողներն են հայտնի լրագրողներ Ավիկ Մարությանը, Գուրգեն Գասպարյանը, Ալվարդ Բարխուդարյանը, Լաուրա Բաղդասարյանը, Սուրեն Գեւորգյանը եւ Մանուկ Նազարյանը:

Առայժմ ձեռնարկի մեկով տեղեկագրի նյութերի ընտրության եւ մատուցման, տեղեկացնենք, որ հանդեսը նոր է հետաքրքրում Հայաստանի «արտաքին եւ ներքին քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, կրթական հիմնահարցերի» վերաբերյալ հայաստանյան մամուլում արտահայտված տեսակետները «ներկայացնելու համահավասար ամբողջությամբ, հետազոտելու, ինչը հնարավորություն կտա տեսնելու հայ մամուլի այսօրվա դեմքը, իր ուղին անցնելու կերպը...»:

Ամփոփագիր-տեղեկագիր նյութերը հավաքվել են տարբեր թերթերից, որոնք, կազմողների կարծիքով, «այսօր այս կամ այն չափով ազդեցություն ունեն հասարակական կարծիքի վրա»:

Ներածական «Երկու խոսքում» ասվում է նաեւ. «Այսպիսի տեղեկագրեր հրատարակվելու են ամսական դարբերականությամբ: Դրանցից յուրաքանչյուրը կընդգրկի նախորդ ամսվա մամուլի թեմատիկ վերլուծական տեսությունը, ինչպես նաեւ լավագույն հրատարակումները»:

Հանդեսի առաջին համարում հասկանալի է արված այս տարվա հունվար ամսի հայաստանյան մամուլից: Նյութերը դասակարգված են «Ներքաղաքական կյանք», «Տնտեսական կյանք», «ԱՊՀ, Անդրկովկաս, Հայաստան», «Դարաբաղյան հիմնահարց», «Սոցիալական ոլորտ», «Մշակութային կյանք», «Կրթական կյանք», «Տեղեկատվական ոլորտ» վերնագրված բաժիններում: Երբեմն ամբողջությամբ մատուցվում են այն հոդվածները, որոնք, կազմողների կարծիքով, առավել կարեւոր են:

Տեղեկագրի ավարտին տրված են ռուսերեն եւ անգլերեն ամփոփումներ:

«Մամուլի թեմատիկ տեղեկագիրը» լույս է ընծայել «Նախրի» հրատարակչությունը:

ԳԵՎՈՐԳ ՅԱԿՈԲՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

Ձեր հարգերի պատասխանները փնտրեք Սամվել Ղազարյանի ցուցահանդեսում

Կենսագրական տվյալները, մի կողմ դնելով եւ մեխանիկածին ռեպորտաժից փորձելով անցնել հարցի բովանդակային մասին, ստիպված ենք համակերպվել այն մտքի հետ, որ Սամվել Ղազարյանը լավ ֆանդակագործ է: Կարեւոր չէ, որ նա ցուցահանդեսներ է ունեցել ոչ միայն Հայաստանում, այլ նաեւ Գերմանիայում, Շվեդիայում, Նորվեգիայում, Իտալիայում կամ շատ ու շատ այլ երկրներում, կարեւոր չեն նրա ոսկե մեդալները կամ այն հանգամանքը, որ շատ ֆանդակներ այսօր գեղեցկացնում են արեւմտյան մասնավոր հավաքածուները եւ թանգարանները: Գլխավորը գործն է. փորձեք համեմատել «Դժոխքի դարպասները», «Բուրգը», «Անանց վերնագրի» եւ «Քավության ուղի» ֆանդակները եւ ձեր առջեւ կբացվի հրաշալի խորհրդանիշերով պատկերված տիեզերք: Խաչբառ: Իսկ կարո՞ղ եք ասել թե «Նոյ» հրակավը ի՞նչ է ասում: Ինչո՞ւ հենց Աշտարակի Կարմրավորը: «Հայոց պատմության» արարատյան գագաթը Աղթամարի գմբեթն է: Ինչո՞ւ: Այցելեք Երեւանի նկարչի տանը բացված Սամվել Ղազարյանի ցուցահանդեսը եւ որոնեցեք ձեր պատասխանները: Մեկ ուրիշ հարցադրում. ցուցահանդեսի այցելու, յուրաքանչյուր ոչ բուք զույգ աչք, նորեն կիրքի (եւ կմոլորվի) հետեւյալ հարցը՝ արվեստը արվեստի համա՞ր է, թե կյանքի:

ԱՐԵՍ ՂԱՀԱՐՅԱՆ

Գարունը՝ Կիեւյան 2ա պատկերասրահում

Նկարչուհի Սեդա Բեհարյանի արվեստը՝ տաք, անխառն երանգաղոնակով ու կաշառող անմիջականությամբ, ծանոթ է գեղանկարչության սիրահարներին, կարծում եմ, նաեւ «Ազգի» ընթերցողին: Վերջին անգամ (անցած աշնանը) նրա գործերը հաջողությամբ ցուցադրվել են Հոլանդիայում եւ Գերմանիայում: Հայ արվեստասերը, որին Սեդան առաջին անգամ ներկայացել է 1992 թ.-ին Երեւանում, օրերս առիթ կունենա առնչվելու նկարչուհու վերջին շրջանի կտավներին. Սեդա Բեհարյանի աշխատանքների անհատական ցուցահանդես-վաճառքը կբացվի ապրիլի 6-ին, ժ. 15-ին եւ կշարունակվի մինչեւ ապրիլի 12-ը՝ Կիեւյան 2ա հասցեում գտնվող պատկերասրահում:

Լ. Պ.

Էջմիածին. «Ծիծաղի օրը» անցավ բացառիկ հաջողությամբ

«Ոգնի» երգիծաթերթի կազմակերպած «Ծիծաղի օր» ավանդական տոնահանդեսն այս անգամ տեղի ունեցավ Էջմիածին քաղաքում եւ անցավ բացառիկ հաջողությամբ: Այդ առթիվ Էջմիածնի մեր թղթակիցը դիմեց քաղաքապետ Ե. Աղվանյանին, որն ասաց.

– Էջմիածինցիները վատուց այդքան չէին ուրախացել, ծիծաղել եւ ծափահարել: Քաղաքի մշակույթի տանը, ինչպես ասում են, ասեղ գցելու տեղ չկար: Երգիծական սրամիտ ելույթներով երեք ժամ շարունակ մարդկանց ուրախացրին Գլխավոր Ոգնին, «Ոգնիներ» եւ «Ֆոտ-տոտ» երիտասարդական երգիծախմբերը, կոմպոզիտոր Մարտին Վարդազարյանը, կատակերգու դերասաններ Աստղ Ղազարյանը, Արմեն Խոսրիկյանը, Ռաֆայել Քորանջյանը, Ժենյա Ավետիսյանը, Յու. Ամիրյանը, Աստղ եղիգարյանը, Լեւոն Մելոյանը, Մարիամ Ղազարյանը, ինչպես նաեւ էջմիածնի երգիծախումբը (Արմինե Գրիգորյան, Սամվել Գրիգորյան, Աննա Լարա) եւ ուրիշներ: Հանդիսականներին ուրախություն պատճառեցին նաեւ ծաղրանկարիչներ Ալեքսան Տաշչյանը եւ Հարություն Չալիկյանը՝ իրենց երգիծական գործերի սրամիտ ցուցահանդեսով:

ՓՈՍՏ

digitised by A.R.A.R.@

ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Ուկրաինայի հավաքականը 9-րդ ենթախմբի առաջատար

ՀՐԱՅՐ ՆԱԶԱՐՅԱՆ

Երեկ Եվրոպայում կայացան ֆուտբոլի աշխարհի առաջնության ընտրական մրցաշարի հերթական հանդիպումները:

Եվրոպական 9-րդ ենթախմբում, որ ընդգրկված է նաև Հայաստանի ազգային հավաքականը, մեծ հետաքրքրություն էր առաջացրել Ուկրաինա-Հյուսիսային Իռլանդիա հանդիպումը, որը կայացավ Կիևում: Ուկրաինացիները կիրակի օրը Գրանադայում հաղթել էին Ալբանիայի հավաքականին (1-0) եւ այս հանդիպումն էլ վերելքով անցկացրեցին: Թվում էր, թե մի քանի օր առաջ պորտուգալացիների հետ 0-0 հաշվով խաղացած իռլանդացիները միավոր կտանեն նաեւ Կիևից, սակայն դա նրանց չհաջողվեց: Ուկրաինացիները, հաղթելով 2-1 հաշվով, գլխավորեցին մրցաշարային աղյուսակը: Նույն ենթախմբում տեղի ունեցավ Ալբանիա-Գերմանիա մրցամարտն ավարտվեց ուշ երեկոյան: Այս խաղի, ինչպես մյուսների մասին կհայտնենք վաղը:

ՈՒԵՖԱ-ի կենտրոնակայանից ստացված տեղեկության համաձայն, մարտի 30-ին կայացած Կիպրոս-Ռուսաստան խաղի արդյունքը (1-1) չեղյալ է համարվել, քանի որ կիպրոսցիների կազմում հանդես են եկել չհայտագրված ֆուտբոլիստներ: Ռուսներին, որոնք այս ոչ-ոքիից հետո բավական ծանր կացության մեջ էին հայտնվել, շնորհվել է 3-0 հաշվով տեխնիկական հաղթանակ: Կիպրացիները հաջորդ խաղում եւս անհաջող հանդես եկան, 1-3 հաշվով զիջելով բուլղարացիներին:



1997 թ. ապրիլի 2. Կիև: Մրցում են Ուկրաինայի եւ Հյուսիսային Իռլանդիայի հավաքականների ֆուտբոլիստները

ՌՈՍԵՐ-ԱՐՄԱՐԻՆԵ

9-րդ խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Ուկրաինա	5	4	0	1	6-3	12
2. Պորտուգալիա	6	2	3	1	5-2	9
3. Հս. Իռլանդիա	5	1	3	1	4-3	6
4. Գերմանիա	3	1	2	0	6-2	5
5. Հայաստան	4	0	3	1	3-7	3
6. Ալբանիա	3	0	1	2	1-7	1

ՍԱՄԲՈ

Քրիստինե Նաջարյանը կրկին առաջինն է Եվրոպայում

Լիտվայի Պանեւեժիս քաղաքում ավարտվեց սամբոյի Եվրոպայի կանանց առաջնությունը, որին մասնակցեցին 11 երկրների ղեկավարներ: Ստուգատեսում առանձնացավ հաջող հանդես եկած հայ մարզուհիները, որոնք նվաճեցին 1 ոսկե, 3 արծաթե եւ 1 բրոնզե մեդալ:

Կանանց ղեկավարում Զոյա Խաչատրյանը (68 կգ) գրավեց երկրորդ տեղը: Օրիորդների տարիքային խմբում կրկին մրցակցությունից դուրս էր Քրիստինե Նաջարյանը (56 կգ), որն էլ առավելության հասնելով բոլոր մրցակցուհիների նկատմամբ հռչակվեց հին աշխարհամասի չեմպիոն: 52 կգ քաշային կարգում Գոհար Գեւորգյանը դարձավ փոխչեմպիոն: Ի դեմ, Գոհարին եւ նրա մարզիչ Թորգոմ Շահբազյանին մրցավայր մեկնելու համար ֆինանսավորել էր Արարատի մարզպետարանը: Նվաճում կարելի է համարել նաեւ Իրինա Բաղդասարյանի (60 կգ) բրոնզե մեդալը:

Հետաքրքիր է, որ դեռատիների դասում Քրիստինե Նաջարյանը արժանացավ երկրորդ դարգելին:

ՇԱԽՄԱՏ

Մինսկի մրցաշարի ավարտը

Բելառուսի մայրաքաղաքում եզրափակվեց «Մինսկ-1997» անվանումը կրող շախմատի միջազգային մրցաշարը, որի 153 մասնակիցների մեջ կային նաեւ 26 գրոսմայստերներ:

9 հնարավորից վաստակելով 7,5 միավոր, առաջին մրցանակը նվաճեց ուկրաինացի գրոսմայստեր Վլադիմիր Մալանյուկը: Հայաստանը ներկայացնող երկու միջազգային վարպետներից Վիգեն Միրզոյանի արդյունքն է 5,5, իսկ Աշոտ Նադանյանինը՝ 5 միավոր: Հայ շախմատիստների ելույթը պետք է հաջող համարել, քանի որ նրանք երկուսն էլ բարձրացրին իրենց անհատական գործակիցները: Գ. Հ.

ՆԱՐԴԻ

Հայ նարդիստները պատրաստվում են աշխարհի առաջնությանը

Ամռանը կայանալիք աշխարհի առաջնությանը նախապատրաստվելու, Հայաստանի հավաքականի կազմը որոշելու նպատակով հանրապետության նարդու ֆեդերացիան ընտրական մրցումների շարք է անցկացնում կարճ խաղաձեւից (Բակգամոն): Ընտրական մրցաշարերում հաջող հանդես եկած մարզիկները եզրափակիչում կպայքարեն Մոնտե Կառլոյի չորս ուղեգրերի համար: Ընտրական մրցաշարերից վերջինի՝ երրորդի եզրափակիչում հանդիպեցին Սերժիկ Արզումանյանն ու Արմեն Մուրադյանը: Համառ ու հետաքրքիր պայքարն ավարտվեց առավել փորձառու Արզումանյանի հաղթանակով: Եզրափակիչին մասնակցելու իրավունք ստացան նաեւ Մուրադյանը եւ երրորդ մրցանակակիր Կոլյա Մուսոյանը: Ավելացնենք, որ նախորդ մրցաշարերի արդյունքներով այդ իրավունքն ունեին Արթուր Մուրադյանը, Համբարձում Աթոյանը, Բագրատ Աբրահամյանը եւ Մկրտիչ Հովհաննիսյանը:

Նարդու սիրահարներին հիշեցնենք, որ ընտրական մրցաշարերն անցկացվում են նարդու հանրապետական ակումբում (Բագրատունյաց 41, Շենգավիթի հանրախանութի երկրորդ հարկ), շաբաթ եւ կիրակի օրերին: Նարդու ֆեդերացիան բոլոր ցանկացողներին հրավիրում է մասնակցելու այդ հետաքրքիր մրցումներին: Ռ. ԱՎԱԳՅԱՆ

ՀՈԲԵԼՅԱՆ

Լրացավ Ֆերենց Պուշկաշի 70 ամյակը

ՌՈՍԵՐ-ԱՐՄԱՐԻՆԵ

Անցյալում հայտնի հունգարացի ֆուտբոլիստ Ֆերենց Պուշկաշը, որը ժամանակին պատրաստել է Բուդապեշտի «Ֆերենցվարոշի» եւ Մադրիդի «Ռեալի» գույներ, դարձավ 70 տարեկան: Այս առթիվ միջազգային օլիմպիական կոմիտեի նախագահ մարկիզ Խուան Անտոնիո Սամարանշը հոբելյարին յուրահատուկ նվեր՝ օլիմպիական մեծ ոսկե մեդալ եւ ֆուտբոլային ոսկե գնդակ հանձնեց: Սա պատահական չէ, քանզի մարդկության ամենահաջող այս գյուտի՝ կլոր հրաբխի շնորհիվ է Ֆերենց Պուշկաշը հանրահայտ դարձել աշխարհում: Ի պատիվ այս իրադարձության Բուդապեշտում կայացավ ընկերական հանդիպում Հունգարիայի եւ Ավստրալիայի հավաքականների միջեւ: Սակայն Պուշկաշը ստիպված էր շնորհավորել հյուրերին որոնք հաղթեցին 3-1 հաշվով:

ԴԱՇՈՒԿԱՎԱՇՔ

Հայաստանցի դահուկորդուհին հավանաբար կմասնակցի Նագանոյի օլիմպիադային

«Ինչպես արդեն հայտնել ենք, գյումրեցի դահուկորդուհի Ալլա Միխայելյանը մեկնել էր Ռուսաստան մասնակցելու մի շարք մրցաշարերի, որոնք հնարավորություն կտային լրացնելու Նագանոյի ձմեռային օլիմպիական խաղերի ուղեգրի համար անհրաժեշտ միավորներ: Սիկսիվկարում նա մեկնարկ դուրս գալով 30 կմ ազատ ոճով մրցաշարածությունում 63 մասնակիցների մեջ գրավեց 41-րդ տեղը: Առավել հաջող էին գյումրեցի սպորտի վարպետի ելույթները Մուրմանսկում կայացած «Հյուսիսի տոնահանդեսում», որտեղ նա 50 կմ ազատ ոճով մրցաշարածությունում 49 մարզուհիների մեջ ցույց տվեց 12-րդ արդյունք:

Այսպիսով, ըստ մեր հաշվարկների, Ալլա Միխայելյանը վաստակելով անհրաժեշտ միավորները իրավունք ստացավ դուրս գալու Նագանոյի մեկնարկ: Սակայն, սպորտվարչության լրատվական ծառայությունից հայտնում են, որ այս լուրը վերջնականորեն կհաստատվի ՄՕԿ-ի պատասխանական գրությունից հետո:

ԼՈՒՐԵՐ

Ամենամենայնիվ Մուրերը

Մայլ Մուրերի վստահ հաղթանակով ավարտվեց նրա մարտը Վոգ Բինի հետ: Այսպիսով, Մուրերը պատրաստեց աշխարհի չեմպիոնի իր տիտղոսը ԻԲՎ վարկածով ծանր քաշում, հայտնում է ԱՊ-ն: Մենամարտը հավաքել էր 8 հազար մարդասերներ Լաս Վեգասի «Հիլթոն» հյուրանոցում: Գուշակություններին հակառակ, Բինը ցույց չտվեց այն վարպետությունը, որը նրանից սպասում էին եւ մենամարտը տեխնիկական ու տակտիկական առումներով բույլ անցկացրեց: Մուրերը չեմպիոնի տիտղոսից բացի ստացավ նաեւ 3,6 մլն դոլար, իսկ նրա մրցակիցը՝ 500 հազար:

Փլվեց բամբուկե տանիքը

Մոտ 150 մարզասերներ, որ եկել էին դիտելու տեղական թիմերի վոլեյբոլի մրցամարտը, վնասվածքներ ստացան, Հնդկաստանից հայտնում է ԱՊ գործակալությունը: Միջադեպը տեղի ունեցավ Վասաֆարա քաղաքում, որը գտնվում է մայրաքաղաք Դելիից 1900 կմ հարավ-արեւմուտք:

Աղետի մանրամասներն առայժմ հայտնի չեն, սակայն ականատեսները մկա եղան, թե ինչպես ժամանակավոր բամբուկե տանիքը փլվեց հանդիսատեսների վրա: Տուժածներից 10-ը հիվանդանոց հասցվեցին ծայրահեղ ծանր վիճակում:

Արտասովոր Ռոդմանը եւ փայլուն Քիթլեսը

NBA-ի մրցաշարում «Նյու Ջերսի Նեթս» ակումբի կազմում 30 համարի մարզազգեստով հանդես եկող Քերրի Քիթլեսը անվանվել է 1996 թ. ակումբի լավագույն խաղացող: Նա այժմ է ընկնում հիանալի ռեակցիայով, արագությամբ եւ հզոր նետումով: Իսկ «Չիկագո Բուլզի» լավագույն խաղացողներից մեկը՝ Դենիս Ռոդմանը հավասար պայքար է մղում ռեբինգի (ամերիկյան ընտանամարտի եւ բռնցքամարտի միաձուլումից առաջացած մարզաձեւ) աշխարհի առաջնությունում: Այս մրցաշարին արտասովոր Ռոդմանը յուրօրինակ երանգ տվեց:

ՀԱՄԱՌՈՏ

Մեքենայությունները ցնցում են մարզաշխարհը

Աշխարհի լրատվական գործակալությունները հայտնում են շաբաթվա սկզբին կատարված երկու աղմկոտ միջադեպերի մանրամասները: Ավստրալացի թեթեւատլետ Դին Կաղաբյանկան որակազրկվել է չորս տարի ժամկետով՝ ստերոիդներ օգտագործելու համար: Մարզիկն ամբողջովին հերքում է իր մեղքը եւ ենթադրում, որ դեղամիջոցները գաղտնի են ավելացվել իր սննդի մեջ: Կաղաբյանկան մտադիր է հետամուտ լինել իր գործի վերանայմանը թեթեւ ատլետիկայի միջազգային ֆեդերացիայում: Իսկ Հոնկոնգում ձերբակալվել են միանգամից 18 հոգի, որոնք կասկածվում են մեքենայություններում՝ ծիարավի մրցումներում: Հինգ ժոկեյներ, երկու մարզիչներ եւ ծիանոցների երեք շարքային աշխատողներ հսկայական գումարներ էին աշխատում, իրար միջեւ պայմանավորվելով հաղթողի հավակնորդների եւ շահագնի չափի մասին: Մաֆիան այս գործի շնորհիվ մեծ գումարներ էր ոստեցնում, միաժամանակ գցելով հոնկոնգյան ծիարավների վարկը: Վերջապես հանցագործները հայտնվեցին տեղական ոստիկանության տեսադաշտում:

Վախեցողը ղեկի մոտ չի նստում

«Ֆորմուլա-1» ավտոարշավի աշխարհի 48-րդ առաջնության մեկնարկը նոր խթան հանդիսացավ մրցումների անվտանգության թեման քննարկելու համար: Կրկին օդակարգում է 2 տարի առաջ Սան Մարինոյի «Մեծ մրցանակի» խաղարկության ընթացքում ավտովթարից զոհված բրազիլացի վարորդ Այրտոն Սեննայի գործը: Այս պատմությունը նոր մրցաշրջանի հաղթողի հիմնական հավակնորդ Ժակ Վիլնյովը, որի հայրը եւս զոհվել էր առաջին «Ֆորմուլայի» մրցուղիում, հայտարարել է. «Ավտոարշավը, ինչպես եւ կյանքը, վտանգավոր ժամանց է: Սակայն, եթե այդպես մտածես, ապա ընդհանրապես չպիտի ղեկի մոտ նստես»:

Տոն տվեցին աֆրիկացիները

Քենիացի Փոլ Բերգերը եւ էֆիոպացի Տադարամ Ֆուտուլուն դարձան թեթեւատլետիկական կրոսսի աշխարհի չեմպիոններ: Մրցումներն անցան աֆրիկացի մարզիկների մեծ առավելությամբ: Տղամարդկանց մրցումներում գերիշխում էին քենիացիները եւ մարոկկոցիները, իսկ կանանց պայքարում առաջին երեք տեղերը զբաղեցրեցին էֆիոպացիները:

ԹԵԹԵՎ ԱՏԼԵՏԻԿԱ

«Մեծ մրցանակի» խաղարկություն հայ պատանիների համար

Սպորտվարչության լրատվական ծառայությունից հայտնում են, որ հայկական թեթեւ ատլետիկայի պատմությունում առաջին անգամ մարզաձեւի հանրապետական ֆեդերացիան մտադիր է կազմակերպել «Մեծ մրցանակի» խաղարկություն, որը բաղկացած կլինի տարբեր կարգի պատանեկան 8 մրցաշարերից: Դրանցից առաջինը ապրիլի 6-ին կանցկացվի Արմավիրում եւ նվիրված կլինի հայտնի ֆիդայապետ Գեւորգ Չաուշի հիշատակին: Այս մրցաշարը նաեւ նախապատրաստական է կիսանդրիսանա հունիսին Պորտուգալիայում կայանալիք Եվրոպայի երիտասարդական օլիմպիական օրերին:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Օրվա հեռանկար

ՏԵՍԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐ

Հայ եւ հույն գործարարները ձգտում են լայն համագործակցության

«Ազգի» մարտի 26-ի համարում տեղեկացրել էինք, որ Աթենք է մեկնել հայ գործարարների ղեկավարությամբ Գործարարների ու արդյունաբերողների միության (ԳԱՄ) եւ Արդիենբանկի նախագահների գլխավորությամբ: Նպատակը Հայաստան-Հունաստան ազատանցային ներդրումների ծրագրի շրջանակում 10 մլն դոլարի վարկային դյուրանցագրի ստորագրումն էր: Ըստ ԳԱՄ նախագահ Ա. Վարդանյանի, Հունաստանի եւ Հայաստանի կառավարությունների միջեւ վաղուց սերտ կապեր են ստեղծվել, բայց նշեալ մակարդակում համագործակցությունը չէր հաստատվում: «Անցած տարի մեր հանդիպումների միջեւ ազատանցափոխանակություն եղել է ընդամենը 9 միլիոնի շրջանակում, որը ծիծաղելի թիվ է: Այն արագորեն դեպի է հասնի 100, 200 միլիոնի: Պետությունների մեծ կազմը (20-ից ավելի) հունական արդյունաբերության զարգացման եւ տեխնոլոգիաների մասին առավելագույն ինֆորմացիա հաղորդելու նպատակով էր դյուրանցավորված: Լինելով Եվրոդրամական տան անմիջական անդամներից, Հունաստանը ներառված է սերտաճման ռազմավարության մեջ, որտեղ հավասարեցնում է գնում նաեւ առաջատար տեխնոլոգիաների ասպարեզում: Վարկը, որ Հունաստանի կառավարության երաշխավորությամբ Հունաստանի Ազգային բանկը առանց ՀՀ կառավարության երաշխիքի տրամադրում է Արդիենբանկին, առաջին հերթին տվելու է փոքր եւ միջին բիզնեսին, որ դիչ է դեպքը: Աշխատանքը ծրագրերը կիրառվելու չափազանց զգուշորեն: Հայաստանի դիրքորոշումը վստահություն դարաձայում: Համենայնդեպս ծրագրվում է, որ մեկ եռամսյակ տվող վարկը չորսի գերազանցի վարկի եւ տոկոսը: Բանի որ Ա. Վարդանյանի բազմաբնակ արտահայտությամբ «վերեւից կա սահմանափակում» եւ վարկը հնարավորինս շատ մարդկանց հասկացնելու մտադրություն: Արդիենբանկի նախագահ Ա. Անդրեասյանը շեշտեց ծրագրերի նկատմամբ հեռանկարային մոտեցումը, ասելով, որ անհնարին է վարկավորել ոչ արդյունավետ ծրագրերը, որը վարկառուի համար չի առյահովում առնվազն 10-12 տոկոս շահույթ:

Վարկն արտոնյալ է, որ տրվում է 5 տարով, LIBOR+2 տոկոսադրույքով, ռեալվերային սկզբունքով: Առաջին 2 տարում հնարավորություն է տրվում մարել միայն տոկոսադրույքները, ապա ներառվում է բուն գումարի մարումը: Արդիենբանկը վարկերը կտրամադրի հայաստանյան շուկայում գործող տոկոսադրույքներից ցածր: Կարճաժամկետ ծրագրերի դրույքները կլինեն համեմատաբար բարձր, քանի երկարաժամկետներինը, որոնք հիմնականում սարքավորումներ ներկրելու նպատակ են հետապնդելու: Վարկ ստանալու հայտ առայժմ ներկայացրել են հայկական 2 ձեռնարկություն: ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը (կերոսին ներկրելու) եւ ՀՀ տրանսպորտի նախարարության «Հայավտոճան» միավորումը (բիտումի ներկրում): Վերջինիս բերեւ, կտրամադրվի կարճաժամկետ վարկ, քանի որ նրան օժանդակում է նաեւ Համաշխարհային բանկը:

Այցի ընթացքում դյուրանավորվածություն է ձեռք բերվել «Ֆարմա» դեղագործական ֆիրմայի հետ որը շուտով դեղանյութեր կառուցի Հայաստան եւ հնարավոր է, որ նաեւ նադրվի նրանց ֆիրմային առեւտրակետը:

Նախատեսվում է ներկրել մրգահյութի արտադրման, մրգերի, ծխախոտի չորացման սարքավորումներ, վերակազմել ծխախոտի ու շաքարի արտադրությունը: Ա. Վարդանյանը նշեց, որ անցած տարի 25 մլն դոլար է ծախսվել շաքար ներկրելու համար, մինչդեռ ժամանակին 6-7 հազար մարդ էր զբաղված շաքարի մշակման եւ արտադրության ոլորտում: «Սեփական շուկան ասիճանաբար դուրս է սահում մեր ձեռքից: Ներմուծման եւ արտահանման քաղաքականությամբ պետք է տեր կանգնել նրան: Սա չի նշանակում, որ ամեն տեսակ անորակ ապրանք արտադրեմ, բայց որոշակի խնամակալություն պետք է իրականացվի»: Տեղեկացնելով, որ հանդիպումների դահլիճներում կուտակված են մի շարք մթերքներ, մասնավորապես տոմատ, որ չեն կարողանում իրացնել, նա նմանատիպ ապրանքատեսակներն հարկադրված ներմուծման դատճառ համարեց անկազմակերպվածությունը:

Պատասխանելով արտահանմանը խթանելու ծրագրերի վերաբերյալ լրագրողների հարցին, դրն Անդրեասյանը ցավով արձանագրեց, որ ներմուծումը երկուսուկես անգամ ավելի է, եւ իրենք դրախ կլինեին խոսեալ արտահանման յուրաքանչյուր խելամիտ փորձ: Սակայն այս վարկով հունական կողմը հետապնդում է սեփական արտահանումը ընդլայնելու նպատակ:

Հետաքրքրական է, որ ներդրումային ներհոսքի ապահովումը համարելով ԳԱՄ ստեղծման կարեւորագույն նպատակներից, Ա. Վարդանյանը առավել կարեւոր համարեց դրոֆեսիոնալ բիզնեսմենների առկայությունը: Գործատուների եւ դրոֆեսիոնալ կազմակերպությունների դասարասումն է: Օրվա խնդիր է նաեւ խոշոր բանկերի ձեւավորմանը նպաստելը, քանի որ առանց էական դրամագլխի ստեղծական լուրջ ներդրումների մասին խոսելն անիմաստ է:

ԱՆՈՒՇ ԳԱԼՍՏՅԱՆ

Կվերադարձնեն Սյունիքի երկու տասնյակից ավելի գյուղեր

Սյունիքի մարզի 25 գյուղեր, որոնք օտարածին եւ աղավաղված անուններ են կրում, շուտով կվերադարձնեն իրենց դատմական տեղանունները: Այս մասին ՀՀ կառավարությանն առաջարկություն է ներկայացրել Սյունիքի մարզդետ Սուրեն Աբրահամյանը՝ հիմք ընդունելով համայնքների ավագանների որոշումը եւ այդ նպատակով ստեղծված մարզային հանձնաժողովի երաշխավորությունը:

ՍԱՐԻՍԵՆ

Նոյեմբերյանը 1.5 ամիս առանց ջրի

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ, 2 ԱՊՐԻԼ, ՓԱՍՏ: Նոյեմբերյան քաղաքը կարող է Գինեսի ռեկորդների գրքում տեղ գտնել: Ամենաերկար հանգիստ ունենալու համար: Քանի որ մեկ եռամսյակ տվող վարկը չորսի գերազանցի վարկի եւ տոկոսը: Բանի որ Ա. Վարդանյանի բազմաբնակ արտահայտությամբ «վերեւից կա սահմանափակում» եւ վարկը հնարավորինս շատ մարդկանց հասկացնելու մտադրություն: Արդիենբանկի նախագահ Ա. Անդրեասյանը շեշտեց ծրագրերի նկատմամբ հեռանկարային մոտեցումը, ասելով, որ անիմաստ է վարկավորել ոչ արդյունավետ ծրագրերը, որը վարկառուի համար չի ապահովում առնվազն 10-12 տոկոս շահույթ:

Վարկն արտոնյալ է, որ տրվում է 5 տարով, LIBOR+2 տոկոսադրույքով, ռեալվերային սկզբունքով: Առաջին 2 տարում հնարավորություն է տրվում մարել միայն տոկոսադրույքները, ապա ներառվում է բուն գումարի մարումը: Արդիենբանկը վարկերը կտրամադրի հայաստանյան շուկայում գործող տոկոսադրույքներից ցածր: Կարճաժամկետ ծրագրերի դրույքները կլինեն համեմատաբար բարձր, քան երկարաժամկետներինը, որոնք հիմնականում սարքավորումներ ներկրելու նպատակ են հետապնդելու: Վարկ ստանալու հայտ առայժմ ներկայացրել են հայկական 2 ձեռնարկություն: ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը (կերոսին ներկրելու) եւ ՀՀ տրանսպորտի նախարարության «Հայավտոճան» միավորումը (բիտումի ներկրում): Վերջինիս բերեւ, կտրամադրվի կարճաժամկետ վարկ, քանի որ նրան օժանդակում է նաեւ Համաշխարհային բանկը:

Այցի ընթացքում դյուրանավորվածություն է ձեռք բերվել «Ֆարմա» դեղագործական ֆիրմայի հետ որը շուտով դեղանյութեր կառուցի Հայաստան եւ հնարավոր է, որ նաեւ նադրվի նրանց ֆիրմային առեւտրակետը:

Նախատեսվում է ներկրել մրգահյութի արտադրման, մրգերի, ծխախոտի չորացման սարքավորումներ, վերակազմել ծխախոտի ու շաքարի արտադրությունը: Ա. Վարդանյանը նշեց, որ անցած տարի 25 մլն դոլար է ծախսվել շաքար ներկրելու համար, մինչդեռ ժամանակին 6-7 հազար մարդ էր զբաղված շաքարի մշակման եւ արտադրության ոլորտում: «Սեփական շուկան ասիճանաբար դուրս է սահում մեր ձեռքից: Ներմուծման եւ արտահանման քաղաքականությամբ դեպի է տեր կանգնել նրան: Սա չի նշանակում, որ ամեն տեսակ անորակ ապրանք արտադրեմ, բայց որոշակի խնամակալություն դեպի է իրականացվի»: Տեղեկացնելով, որ հանդիպումների դահլիճներում կուտակված են մի շարք մթերքներ, մասնավորապես տոմատ, որ չեն կարողանում իրացնել, նա նմանատիպ ապրանքատեսակներն հարկադրված ներմուծման դատճառ համարեց անկազմակերպվածությունը:

Պատասխանելով արտահանմանը խթանելու ծրագրերի վերաբերյալ լրագրողների հարցին, դրն Անդրեասյանը ցավով արձանագրեց, որ ներմուծումը երկուսուկես անգամ ավելի է, եւ իրենք դրախ կլինեին խոսեալ արտահանման յուրաքանչյուր խելամիտ փորձ: Սակայն այս վարկով հունական կողմը հետապնդում է սեփական արտահանումը ընդլայնելու նպատակ:

Հետաքրքրական է, որ ներդրումային ներհոսքի ապահովումը համարելով ԳԱՄ ստեղծման կարեւորագույն նպատակներից, Ա. Վարդանյանը առավել կարեւոր համարեց դրոֆեսիոնալ բիզնեսմենների առկայությունը: Գործատուների եւ դրոֆեսիոնալ կազմակերպությունների դասարասումն է: Օրվա խնդիր է նաեւ խոշոր բանկերի ձեւավորմանը նպաստելը, քանի որ առանց էական դրամագլխի ստեղծական լուրջ ներդրումների մասին խոսելն անիմաստ է:

ԱՆՈՒՇ ԳԱԼՍՏՅԱՆ

Խեղճ հորթուկ, որն ուներ երկու քիթ

Արմավիրի մարզի Հայկավան գյուղի բնակիչ Կարլեն Ավետիսյանի կովը օրերս ծնեց մի հորթուկ, որի գլուխ այլերը անհավասարաչափ էին՝ վերեւ նեղեն: Հորթուկն ուներ երկու քիթ: Հորթուկը սնվում էր մոր կաթով: Անասնաբույժ եւ անասնաբույժ մասնագետներն այն կարծիքին էին, որ արտասովոր հորթուկը կարող էր ապրել եւ լավ քաշ ունենալ, սակայն ապրեց ընդամենը 21 օր:

Անօրինական ներգաղթյալների դեմ ԱՄՆ-ի նոր օրենքը՝ ուժի մեջ

2 ԱՊՐԻԼ, VOA: Միացյալ Նահանգներում, չնայած ներգաղթյալների իրավունքների դաշտպանների բողոքներին, ուժի մեջ մտավ երկիր մուտք գործելու մասին նոր օրենքը: Բողոքարկման դատարանը չեղյալ հայտարարեց Նյու Յորքի դատարանի վճիռը կասեցնել ապրիլի 1-ից այդ օրենքի ուժի մեջ մտնելը: Նոր կանոնները հեռացնում են անօրինական ներգաղթյալներին երկրից վտարելը եւ սահմանադրական ծառայություններին գործելու ավելի մեծ ազատություն են տալիս: Նոր օրենքը խուճապ է առաջացրել այն նահանգներում, որտեղ մեծ է ներգաղթյալների տոկոսը, չնայած կառավարությունը խոստացել է անօրինական ներգաղթյալներին զանգվածաբար չվտարել երկրից: Երկար հերթեր են առաջացել այն հիմնարկությունների մոտ, որտեղ ձեւակերպվում են ամուսնությունները, քանի որ անօրինական ներգաղթյալներին ժամանակ է հատկացված, մինչեւ ս. թ. սեպտեմբերի 30-ը նրանք պետք է օրինական ճանապարհներով ստանան օրինական ներգաղթյալի կարգավիճակ: Իսկ ամուսնական վկայականի գինը, ըստ ներգաղթյալների վկայության, տատանվում է 10-40 հազար դոլարի միջեւ: Ներգաղթյալը, որին կորոշվի վտարել երկրից, իրավունք ունի բողոքարկելու: Սակայն անկախ այդ հավաստիացումներից, կտուժեն նաեւ օրինական ներգաղթյալները, որոնք այսօրվանից կզրկվեն գործազրկության համար տրվող դաշնային նպաստից: Այդ գումարներն այժմ պետք է վճարեն նահանգների իշխանությունները: Սակայն ոչ բոլոր նահանգներն են ի վիճակի վճարել այդ նպաստները: Ներգաղթյալների համար դա ողբերգություն կլինի, քանի որ այդ նպաստները նրանց ապրուստի միակ միջոցն էին: Մեքսիկայի կառավարությունն իր բողոքն է արտահայտել ԱՄՆ-ի նոր օրենքի կապակցությամբ եւ հայտարարել է, թե Միացյալ Նահանգների կառավարությունից կպահանջվի մեղմացնել նոր կանոնները:

«ԱՅԱՔՍ»
ՖԻՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է
ՁԵՋ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ

Ամեն երկուշաբթի տուրիստական ուղեւորություն
ՀԱԼԵՊ-ԲԵՅՐՈՒԹ
հաճելի ճամփորդություն,
շահավետ առեւտուր արեւելյան հարուստ շուկայում
Երկու շաբաթը մեկ անգամ կանոնավոր ուղիղ չվերթ
ԵՐԵՎԱՆ-ԼԱՌՆԱԿԱ (ԿԻՊՐՈՍ)
Հրաշալի Միջերկրական ծովափ
Բարձրակարգ հյուրանոցներ բոլոր հարմարություններով
Ապրիլի 23-ից մայիսի 9-ը
կազմակերպվում է տուրիստական ուղեւորություն
ՀԵՔԻԱԹԱՅԻՆ ԲՐԱԶԻԼԻԱ
4 աստղանի հյուրանոց, սնունդը օրը մեկ անգամ
Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ ապրիլի 7-ը:
Կազմակերպվում է ավիատոմսերի վաճառք ԱՊՀ
եւ բոլոր ուղղություններով:
ԵՐԵՎԱՆ, ՊՈՒՇԿԻՆԻ Փ. 43/ա ՀԵՌ. 538845, 531573

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ
Վկայագիր/մագիստրոսի կոչում շնորհող ծրագիր
1997-1998 թթ.

Հայաստանի ամերիկյան համալսարանն ընդունում է դիմումներ «Հասարակական առողջապահություն» վկայագիր/մագիստրոսի կոչում շնորհող ծրագրի համար: «Հասարակական առողջապահություն» ծրագրի նպատակն է համապատասխան կրթությամբ մասնագետներ ապահովել հասարակական առողջապահության ոլորտում աշխատելու համար: Առանձնահատուկ ուշադրություն կհատկացվի առողջապահության հիմնական գիտությունների ուսումնասիրությանը, ներառյալ ծրագրավորմանը, գնահատմանը, կառավարմանը, կարի միջոցներին, համաճարակաբանությանը եւ ղեկավարմանը:

Դիմորդները պետք է լինեն կամ բժշկական (ատամնաբուժական բաժինը ներառյալ) եւ անասնաբուժական ինստիտուտների շրջանավարտներ, կամ ճարտարագիտական, բնագիտական, հասարակագիտական կամ այլ հարակից մասնագիտությունների բարձրագույն կրթություն ունեցող անձինք, որոնք ունեն առողջապահության կառավարման կամ հասարակական առողջապահական ծառայության բնագավառում առնվազն երկու տարվա աշխատանքային փորձ:

ՀԱՀ ընդունվելու համար անհրաժեշտ է ունենալ ընդհանուր գնահատականների 4.0 եւ բարձր միջին ցուցանիշ, ինչպես նաեւ TOEFL քննությունից հավաքել 550 միավոր կամ ՀԱՀ-ում մայիսի 6-ին կազմակերպվող անգլերեն լեզվի իմացությունը գնահատող քննությունից ստանալ բարձր գնահատական: Անհրաժեշտ է նաեւ բավարար գնահատական ստանալ յուրաքանչյուր հոկտեմբերին ՀԱՀ-ում կազմակերպվող GRE քննությունից: Այն դիմորդները, որոնք չեն բավարարի անգլերեն լեզվի իմացության պահանջված մակարդակը, կմասնակցեն 1997 թ. մայիսին ՀԱՀ-ում սկսվող անգլերեն լեզվի առաջացված դասընթացին, որի ուսման վարձը կազմում է ԱՄՆ 300 դոլարին համարժեք դրամ:

1998 թ. գարնան, ամռան եւ աշնան ընթացքում ուսանողները կունկնդրեն հետեւյալ դասընթացները. առողջապահության ղեկավարում եւ կառավարում, կենսավիճակագրություն, համաճարակաբանություն, առողջապահության տեղեկատու համակարգեր, շրջակա միջավայրի առողջապահություն եւ վարքագծային գիտություններ:

1999 թ. ՀԱՀ-ը նախատեսում է հասարակական առողջապահության երկրորդ տարվա դասընթացներ, որոնք ավարտելուց հետո կշնորհվի հասարակական առողջապահության մագիստրոսի կոչում:

Դիմումների ընդունման վերջին ժամկետը սույն թվականի մայիսի 2-ն է: Փաստաթղթերի ընդունման համար կանխավճարը դրամով կազմում է ԱՄՆ 10 դոլարին համարժեք գումար, որը պետք է մուծել փաստաթղթերը հանձնելիս: Դիմումների ձեւերը կարելի է ստանալ ՀԱՀ-ի ընդունելության գրասենյակից: Հասցեն՝ Երեւան, Մարշալ Բաղրամյան 40, 19 սենյակ, հեռախոս 27-16-29:

Դիմորդների վերջնական ընտրությունը կկատարվի 1998 թ. փետրվար ամսին: Բոլոր ուսանողները պետք է ՀՀ կրթության եւ գիտության նախարարության հետ պայմանագիր ստորագրեն ավարտելուց հետո երեք տարի Հայաստանում մնալու եւ աշխատելու համար:

ՀԱՀ-ը ռասայական, կրոնական, սեռային եւ ազգային խտրականություն չի ճանաչում

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
3 սենյականոց բնակարան Նորքի 5-րդ զանգվածում, շ. 17, բն. 9
հեռ.՝ 64-88-85 63-03-47

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
սեփական երկհարկանի շենքի 2-րդ հարկը բաղկացած երեք սենյակից: Երկու կողմից սեփական հողաստարածք 300 քառ մետր ընդհանուր մակերեսով: Երկու ավտոնակ, մուտքը առանձին: Հասցեն՝ Զրաբաս 68 (ԳԱ հետեւի մասում): Հեռախոս 52-54-39:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
կիսակառույց երկհարկանի տուն
Նոր Արեշ 31 փողոցում. Հեռ. 45-59-99

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
2 սենյականոց բնակարաններ եւ ավտոնակ 5 հարկանի քարե շենքի 1-ին եւ 2-րդ հարկերում. Դեմիրճյան 17 շենք:
Հեռ.՝ 581841, 523056, 523884

ՇՏԱՊ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
3 սենյականոց բնակարան 5 հարկանի քարե շենքի 5-րդ հարկում, 70/50 մ², ավտոնակով: Հրաչյա Քոչար 23 (նախկին Չեկի խանութի մոտ):
Հեռախոս՝ 22-42-68

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
Առանձնատուն, 80 քառ. մ նկուղ ավտոնակով եւ երկու բնակելի հարկով առանց ներքին հարդարանքի, «Զվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում (Մոնումենտ): Կա նաեւ մրգատու ծառերով փոքրիկ այգի: Զանգահարել 27 22 57 ժամը 10-16, 58 33 26 ժամը 18-23

«ԱՓ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ԱՆԿԵԱՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԻ ԵՎ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ԱՍԱՍԻՆ ՀԵՌԱԽՈՍՈՎ: 589167, 581351

«Գարեգինյան» հրատարակչության տպարան. Երեւան 23, Նորագյուղ 2. Գրանցման թիվ 65. Դասակ 69149. Պատվեր 550. Տպաքանակը 3000. Ստորագրված է տպագրության՝ 2.04.1997. Գինը 100 դրամ

digitised by A.R.A.R.@